

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

### Մամուլի Ազատութեան Օրը Եւ Հայաստանեան Լրատուամիջոցներու Տագնապը

Մայիս 3-ը Միացեալ Ազգերու Կազմակերպութեան կողմէ հռչակուած է Համաշխարհային Մամուլի Ազատութեան օր: Այդ առթիւ վեր կ'առնուին մամուլի ազատութեան հիմնարար սկզբունքները, գնահատական կը տրուի տարբեր երկիրներու մէջ մամուլի ազատութեան մակարդակին եւ կը դատապարտուին անկախ մամուլի դէմ յարձակումները:

2018-ի ժողովրդային յեղափոխութենէն ասդին մամուլի եւ մարդակային իրաւունքներու պաշտպանութեան ծիրէն ներս Հայաստան արձանագրեց զգալի յառաջընթաց ու «Լրագրողներ Առանց Սահմաններու» կազմակերպութեան 2021 թուականի աղիւսակին վրայ աշխարհի 180 երկիրներուն մէջ կը դասուի 63-րդ դիրքի վրայ: Այս ցուցանիշը բաւական խօսուն է եթէ նկատի ունենանք որ, մամուլի ազատութեան գծով մեծ աւանդոյթ ունեցող Միացեալ Նահանգները կը գրաւէ 44-րդ տեղը: Առաջատարները կը շարունակեն մնալ սկանտինաւեան շարք մը երկիրներ:

Անկախ զբաղեցուցած իր դիրքէն, Հայաստանեան լրատուական դաշտը կը մնայ հեռու իր առաքելութիւնը խղճմտօրէն կատարելու պարտաւորութենէն եւ կը ծախողի ընթերցողներուն կամ ունկնդիրներուն հաւաստի տեղեկութիւն փոխանցելու մէջ: Հայաստանեան լրատուամիջոցներու մեծ մասը գոյատեւելու համար կ'ապաւի մախկին օլիգարքներու կողմէ նիւթական օժանդակութեան վրայ: Անոնք է որ կը թելադրեն տուեալ լրատուամիջոցի ոչ միայն քաղաքական ուղղութիւնը, այլ եւ զանոնք կը դնեն ապատեղեկատուութիւն տարածելու ստիպողութեան տակ:

Կեղծ ու ոչ հաւաստի լուրերու տարածումը ներկայիս կը հանդիսանայ Հայաստանեան մամուլի գլխաւոր տագնապը: Ընկերային ցանցերու վրայ երեւացող անհատական գրութիւններ անմիջապէս կը «ցատկեն» լայն տարածում ունեցող կայքէջեր, որոնք առանց ստուգելու, տեղ կու տան բացայայտ ապատեղեկութիւն եւ կամ զրպարտութիւն պարունակող բովանդակութիւններուն, նոյնիսկ երբ անոնք կը սպառնան երկրի անվտանգութեան ու կը նպաստեն թշնամիի շահերուն: Ասոր ցայտուն մէկ օրինակը վեր-

### Արտաւերթ Ընտրութիւններ Կազմակերպելու Նպատակով Փաշինեան Զընտրուեցաւ Վարչապետ



Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ Խորհրդարանի Մայիս 3-ի նիստին

Մայիս 3-ին, Հայաստանի Խորհրդարանը Նիկոլ Փաշինեանը չընտրեց վարչապետ, 1 կողմ, 3 դէմ եւ 75 ձեռնպահ ձայներու յարաբերակցութեամբ:

Ապրիլ 25-ին Փաշինեան հրատարած էր, որպէսզի համաձայն քաղաքական ուժերու հետ ձեռք ձգուած պայմանաւորուածութեան, երկու անգամ խորհրդարանը նոր վարչապետ չընտրէ եւ կազմակերպուին ընտրութիւններ: Վարչապետի յաջորդ ընտրութիւնը տեղի պիտի ունենայ մէկ շաբաթէն:

Նախքան քուէարկութիւնը, պատգամաւոր Տիգրան Ուրիխանեանի խնդրանքով արձագանգելով

երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի վերջին հարցազրոյցին՝ Փաշինեան յայտարարեց, որ Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման բանակցային բովանդակութիւնը փոխուած է 2015-ին եւ ոչ թէ 2018-էն յետոյ:

«Բովանդակութիւնը փոխուել է, ծուռել է 2015 թուականի աշնանը, 2016 թուականի ձմեռանը: Եթէ Սերժ Սարգսեանը որոշել է, որ ինքը պէտք է բացայայտուենք անի, թող բարի լինի, մարդկանց պատմել 2015 թուականի աշնան եւ 2016 թուականի ձմեռան իրադարձութիւնները: Ուշադրութիւն

### Պայտընի Վարչակազմը Պիտի Չստեցնէ Ֆինանսական Օժանդակութիւնը Ատրալէյճանին

Հակառակ նախընտրական յայտարարութիւններուն, ամերիկահայերուն ու գոնկրէսականներուն տրուած խոստումներուն՝ ձօնաշարի վարչակազմը պիտի չստեցնէ ֆինանսական օժանդակութիւնը Ատրալէյճանին, գրած է Ուաշինկթոնին մէջ լոյս տեսնող The Hill պարբերականը: Ժիշդ հակառակը, ըստ հրատարակման, գործող վարչակազմը, հետեւելով իր նախորդներու օրինակին, արդէն իսկ ծանուցում ուղարկած է Գոնկրէս՝ Ատրալէյճանի դէմ ընդունուած 907-րդ լրացումը ստեցնելու մասին:

Ըստ The Hill պարբերականին, պետական քարտուղար՝ Պլինքըն, Գոնկրէս ուղարկած է Ապրիլ 26-ին՝ նախագահ Պայտընի կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչումէն երկու օր ետք:

Նախագահ Պայտըն քննադատած էր իր նախորդը՝ Դանըլտ Թրամփը՝ Ղարաբաղեան վերջին պատերազմին որդեգրած կրակորական դիրքին համար՝ պահանջելով ճնշում գործադրել եւ կանգ-

### Եւրոպական Խորհրդարանի 120 Անդամներ Պահանջած Եւ Ազատ Արձակել Հայ Ռազմագերիները

Եւրոպական Խորհրդարանի 120 պատգամաւորներ նամակով դիմած են Եւրոպական Միութեան ղեկավարներուն՝ կոչ ընելով գործօն քայլեր ձեռնարկելու Ատրալէյճան պահուող հայ ռազմագերիները ազատ արձակելու նպատակով: Եւրոպական յանձնաժողովի նախագահ՝ Ուրսուլա Ֆոն Լայթն եւ ԵՄ խորհուրդի ղեկավար՝ Շարլ Միշելին ուղղուած նամակի բովանդակութիւնը թուիթթրի իր էջով Մայիս 4-ին հրատարակած է Եւրոպական Խորհրդարանի Եւրոպական ժողովրդական կուսակցութեան (EPP) խմբակցութեան փոխնախագահ, պոլկարացի պատգամաւոր՝ Անտրէյ Բովաչեւը:

Ուղերձին տակ ստորագրած եւրոպացի պատգամաւորներու գնահատմամբ՝ Ատրալէյճան պահուող հայ ռազմագերիներու թիւը թեւեւս գերազանցած է 200-ը: «72

### Իտալական Պարբերականը Ուրուկուայի Հայութեան, Յեղասպանութեան Եւ Ինքնութեան Պահպանման Մասին



Իտալական ամսագրի էջերուն վրայ լոյս տեսած նկարին մէջ՝ ՍԴԴԿ ատենապետ Դանիէլ Մանուէլեան Կուսակցութեան կեդրոնէն ներս

Վերջերս իտալացի լրագրող Ֆետերիքո Նաստասի աչցելով Ուրուկուայ «Missioni Consolata» ամսագրին համար պատրաստած է ճամբորդական «Տոսիէ», որուն մէջ յատուկ անդադարձած է նաեւ Ուրուկուայի հայ համայնքին: ««Ես հայ եմ», - սպաներէնով

կ'ըսէ Մոնթեվիտոյի «Մէլուտա Վիետա» գրախանութի վաճառող Սիլվանան: Սիլվանան, հակառակ որ ծնած է Ուրուկուայի մէջ, հայերէնի չի տիրապետեր եւ երբեք ոտք չէ դրած Հայաստան, բայց հոգ

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Սերժ Սարգսեանը Սոռացել է Իր «Սորոսական» Թիմակիցներին

Օրերս ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսեանը Armnews.am-ին տուած հարցազրույցում անդրադարձել է Սորոսի հիմնադրամին: Սերժ Սարգսեանն արձագանքելով այն դիտարկմանը, որ Ձեզ մեղադրում են, որ սորոսական ֆոնդերը լայնորէն տարածուել են եւ սկսել են երկիրը քանդել Ձեր կառավարման տարիներին՝ նշել է. «Սորոսի հիմնադրամի ներկայացուցիչներն այստեղ վարում էին այնպիսի քաղաքականութիւն, որի հետ մենք համաձայն չէինք, դա միանշանակ է, բայց Սորոսի հիմնադրամը մուտք է գործել Հայաստան 1997 թուականին»:

Նա նաեւ յաւելել է, որ անհամաձայնութիւններ ունէին սորոսականների հետ, բայց, իր կարծիքով, նրանք այդքան էլ մեծ վտանգ չէին ներկայացնում այն ժամանակ Հայաստանում, որովհետեւ նրանք որեւէ ազդեցութիւն չունէին իշխանութեան կողմից կայացուող որոշումների վրայ. «Իսկ իշխանափոխութիւնից յետոյ իրենք, իհարկէ, ներթափանցեցին եւ՝ խորհրդարան, եւ՝ գործադիր իշխանութեան տարբեր կառույցներ, ու իրենց գաղափարները հիմա իրականացնում են»:

Եւ թէպէտ ՀՀ երրորդ նախագահն ասում է, թէ սորոսականներն իշխանափոխութիւնից յետոյ են ներթափանցել խորհրդարան, այնուամենայնիւ, իր ղեկավարման տարիներին Աժ-ում գործող անձինք եւս գերծ չեն մնացել Սորոսի հիմնադրամի հետ համագործակցելուց:

Այս համատեքստում, չիշեցնենք, որ 2017թ. Սերժ Սարգսեանի օրօք Աժ պատգամաւոր ընտրուած Սամուէլ Ֆարմանեանը 2003-2005 թթ. աշխատել է «Բաց հասարակութեան ինստիտուտի օժանդակութեան հիմնադրամի», այսպէս ասած, Սորոսի հիմնադրամի հա-

յատանեան մասնաճիւղում որպէս «Քաղաքացիական հասարակութիւն» եւ «Զանգուածային լրատուութեան միջոցներ» ծրագրերի համակարգող:

Աւելին՝ 2017-2018 թթ. Աժ նախագահ Արա Բաբլոյեանին եւս տրուել է դրամաշնորհ Սորոսի հիմնադրամից՝ 2014թ. Նոյեմբերի 16-21-ը Հռոմում Պեդիատրիկ պալատի խնամքի 2-րդ եւրոպական կոնգրեսին մասնակցութեան համար: Այս տեղեկութիւնը յայտնել է «Բաց հասարակութեան հիմնադրամները»՝ ի պատասխան Civilnet-ի գրաւոր հարցման:

«Բաց հասարակութեան հիմնադրամներ»-ից նաեւ նշել են, որ իրենց դրամաշնորհներից օգտուել են նաեւ Աժ նախկին պատգամաւոր Հայկ Բաբուխանեանը, որն ստացել է անհատական դրամաշնորհ՝ 2000թ. Սեպտեմբերի 29-30-ը Բուդապեշտում Միջազգային քրէական դատարանի գիտաժողովին մասնակցելու համար: Նշենք, որ թէպէտ Բաբուխանեանը հերքել էր տեղեկատուութիւնը, այնուամենայնիւ հիմնադրամից շեշտել էին իր անունը:

Ըստ հիմնադրամի՝ դրամաշնորհ է ստացել նաեւ 2015թ. ՀՀԿ-ական նախկին պատգամաւոր, «Եւրոպական ինտեգրացիա» ՀԿ-ի ղեկավար Կարէն Բեքարեանը:

Յիշեցնենք նաեւ, որ Civic.am-ը վերջերս յօդուած էր հրապարակել այն մասին, որ ՀՅԴ-ին պատկանող «Եկիր մեղի» հեռուստաալիքը աւելի քան 200,000 տղարի դրամաշնորհ է ստացել Սորոսի հիմնադրամից՝ հաղորդումներ հեարձակելու համար: Իսկ Սերժ Սարգսեանի նախագահութեան տարիներին ՀՅԴ անդամները ոչ միայն խորհրդարանում էին, այլ նաեւ զբաղեցնում էին բարձր պաշտօններ:

«Civic.am» կայքէջ

Մինսկի Խմբի Ձեւաչափի Ակտիւացումն Այլընտրանք Չունի

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԵԱՀԿ Մինսկի խմբի պլատֆորմն անհրաժեշտ է տարածաշրջանում «խաղացող» բոլոր կողմերին, բացի Ատրպէյճանից եւ Թուրքիայից: Կառույցի աշխատանքը կարելու է առաջին հերթին այն բանով, որ արցախեան հիմնահարցը դեռ լուծուած չէ, որքան էլ հակառակի մասին պնդեն թուրքական եւ ատրպէյճանական կողմերը: Եթէ առկայ է չլուծուած հակամարտութեան, ապա քաղաքական հարթակ է անհրաժեշտ այն լուծելու համար, իսկ դրա փորձուած ձեւաչափը Մինսկի խումբն է:

Իրավիճակի մակերեսային դիտարկումից կարելի է եզրակացնել, որ Մինսկի խմբի համաձայնագրահոյ երկրներից միայն Ռուսաստանը, թերեւս, պակաս չհարգուած կը լինի այդ հարթակի աշխատանքով, քանի որ այսպէս, թէ այնպէս անմիջական ներգրաւուածութիւն ունի խնդրի լուծման գործընթացում՝ խաղաղապահի կարգավիճակով: Սակայն ռուսական կողմը միանշանակ դիտարկում է դէպքերի զարգացման այնպիսի ընթացք, երբ Թուրքիան ամէն վայրկեան կարող է վերադառնալ ՆԱՏՕ-ի ուղեծիր: Այս դէպքում արցախեան խնդրի կարգաւորման քաղաքական հարթակի անհրաժեշտութիւնը կը զայ առաջին պլան: Թերեւս, սա է պատճառը, որ ՌԴ-ն չի հրաժարուում Մինսկի խմբի ձեւաչափից:

Դա է փաստում նաեւ Վլադիմիր Փուլիինի եւ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մակրոնի միջեւ կայացած հեռախօսազրույցը, որի ժամանակ նրանք պայմանաւորուել են վերականգնել ջանքերը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում դարաբաղեան խնդրի կարգաւորման շուրջ եւ նախատեսել առաջիկայ օրերին ներկայացնել

այդ ուղղութեամբ յատակ նախաձեռնութիւն: Մակրոնն անդրադարձել էր նաեւ ռազմագերիների, մարդասիրական օգնութեան եւ մշակութային ժառանգութեան պահպանման հարցում առաջընթացի հասնելու անհրաժեշտութեանը:

Փուլիին-Մակրոն հեռախօսազրույցը տեղի ունեցաւ Ապրիլի 24-ին ՃՕ Պայտրնի յայտարարութեան եւ դրան յաջորդած զարգացումների ֆոնին: Հայոց ցեղապանութիւնը ճանաչելու վերաբերեալ ԱՄՆ ուղերձից յետոյ, բոլորի համար անսպասելի, էրտողանը շատ մեղմ արձագանքեց Պայտրնին, աւելին՝ խօսեց ԱՄՆ-ի հետ յարաբերութիւնների նոր փուլ սկսելու մասին: Ի պատասխան արան՝ ՌԴ-ն միանգամից ակտիւացրեց Մինսկի խմբի ձեւաչափի գաղափարը, որի դէմ ոչ մէկ անգամ արտայայտուել էր էրտողանը՝ յայտարարելով վերջինիս անարդիւնաւետութեան մասին: Արձանագրենք, որ Մինսկի խմբի ձեւաչափի վերագործարկման մասին խօսում է նաեւ ԱՄՆ-ն, եւ սպասուում է, որ վերջինիս հետ յարաբերութիւնները բարելաւել ձգտող Թուրքիան այս դէպքում չի ընդդիմանայ այդ գործընթացին՝ այն, իհարկէ, իր կողմից մեծ զիջում անելու միտման ներքոյ:

Իսկ այն, որ ՌԴ-ի եւ Ֆրանսայի նախագահների հեռախօսազրույցի հիմնական թեման եղել է ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքների ակտիւացումը, հաստատեց

Շար.ը էջ 15

Սերժ Սարգսեանի Խնդրանքը Փութինին Ռոբերտ Քոչարեանին

ՅԱԿՈՔ ԲԱՂԱՆԵԱՆ

Օրերս հեռարձակուած իր հերթական հարցազրույցում անդրադառնալով 2018 թուականի Ապրիլի իրադարձութիւններին ու յետագայ զարգացումներին, երրորդ նախագահ Սերժ Սարգսեանը իհարկէ բացայայտ թիրախաւորելով Նիկոլ Փաշինեանին, դրան զուգահեռ բաւականին թափանցիկ ակնարկներով անուղղակի, սակայն խիստ նկատելի թիրախաւորում էր նաեւ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանին: Օրինակ, որքան խօսում են նրան ուղղուած հարցը՝ Փութինից իշխանութիւն խնդրելու մասին, եւ պատասխանը, որ Փութինից պատրաստ է շատ բան խնդրել Հայաստանի համար, եւ խնդրել է՝ նախագահ եղած ժամանակ, սակայն խնդրել իշխանութիւնը պահելու կամ իշխանութեան գալու հարցում, դա իրենք չէ, ինքը չի անի այդպիսի բան, քանի որ դա արժանապատիւ չէ: Թերեւս աւելորդ է մեկնաբանել, թէ ինչ ստոյգացիա է առաջացնում հարցն ու պատասխանը, եթէ նկատի առնենք այն, թէ Փութինի հանգամանքը ինչ աստիճանի ինտենսիւթեամբ է իր քաղա-

քական «քսակում» թափահարել երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանը գործնականում թաւշեայ լեզուափոխութիւնից ի վեր, եւ աւելի ու աւելի ինտենսիւ: Հարցազրույցում կան իհարկէ դարձեալ բաւականին հնչող օրինակներ, թէ ինչպէս է երրորդ նախագահը նուրբ ակնարկներով թիրախաւորում երկրորդին: Խոշոր հաշուով, Սերժ Սարգսեանի հարցազրույցը ոչ միայն վերստին վկայեց, այլ ընդգծեց նաեւ, որ ժամանակի ընթացքում աւելի է սրուելու պայքարը նրա եւ Ռոբերտ Քոչարեանի միջեւ՝ նախկին կառավարող համակարգը տնօրինելու, ըստ այդմ այդ համակարգի յետագայ վարքագիծը կառավարելու համար: Այդ պայքարը թերեւս շարունակուելու է նաեւ Յունիսի 20-ից յետոյ, անկախ, թէ ինչպիսի արդիւնքով կ'աւարտուի ընտրութիւնը եւ ինչ ցուցանիշ կ'արձանագրեն ըստ էութեան նոյն ընտրագանգուածի համար պայքարող Ռոբերտ Քոչարեանի եւ Սերժ

Եւ Ակնարկը

Սարգսեանի գլխաւորած դաշինքները, անկախ, թէ նրանցից ով կը յայտնուի խորհրդարանում: Հաւանականութիւնը, որ կը յայտնուեն երկուսն էլ, թերեւս բացառելի չէ, սակայն բաւականին փոքր է: Աւելի հաւանական է, որ երկուսն էլ չյայտնուեն, թէեւ այստեղ իհարկէ երկրորդական գործօն չի լինելու հենց այն, թէ ով ինչ է խնդրում Փութինից: Չի բացառուում անգամ, որ Սերժ Սարգսեանը ակնարկում էր, որ Ռոբերտ Քոչարեանը խորհրդարանում կարող է յայտնուել միայն Փութինի շնորհիւ: Բանն այն է, որ Սերժ Սարգսեանը թերեւս փորձ է անում այդպիսով նաեւ ապահովագրուել այն պարագայի համար, երբ Ռոբերտ Քոչարեանին յաջողուի յայտնուել խորհրդարանում, իսկ իրեն՝ ոչ: Այդ դէպքում բնականաբար առաջանալու է թիմը պահելու խնդիր, հետեւաբար նաեւ արդիւնքի համար բացատրութեան հարց: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնետր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱՁԱՊԱՐԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

ՀՀ-ն Ընտրութիւններուն Կը Մասնակցի «Հայրենիք» Հետ Դաշինքով

Հայաստանի Հանրապետական կուսակցութիւնը (ՀՀԿ) Յունիս 20-ին սպասուող արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն պիտի մասնակցի Փաշինեանի կողմէ Ազգային անվտանգութեան ծառայութեան (ԱԱԾ) տնօրէն նշանակուած, ապա հեռացուած Արթուր Վանեցեանի «Հայրենիք» կուսակցութեան հետ դաշինքով: Ապրիլ 29-ի երկօրեան տեղի ունեցած ՀՀԿ գործադիր մարմնի նիստէն յետոյ այս մասին յայտարարեց Հանրապետականի փոխ նախագահ՝ Արմէն Աշոտեան՝ կարծիք յայտնելով, թէ Հնարաւոր գործակցութիւն ամենաարդիւնաւէտն է Նիկոլ Փաշինեանին իշխանութենէն հեռացնելու համար:



Հանրապետական կուսակցութեան փոխ նախագահ՝ Արմէն Աշոտեան

«Որոշման կայացման համար հիմք են հանդիսացել ընդդիմադիր դաշտի վերջին զարգացումները, ինչպէս նաեւ հողատունին օր առաջ գահընկեց անելու հրամայականը: Հաշուի առնելով ստեղծուած քաղաքական իրողութիւնները՝ մենք կարծում ենք, որ «Հայրենիք» կուսակցութեան հետ մեր հնարաւոր քաղաքական համագործակցութիւնն ամենաարդիւնաւէտն է լինելու ստեղծուած իրավիճակում հողատունին գահընկեց անելու համար», - ըսաւ Աշոտեան:

ՀՀԿ փոխ նախագահը չի բացառուց, որ արտահերթ ընտրութիւնները իրենց սրտով չեն եղած, փորձած են կանխել անոնց կայացումը, միեւնոյն ժամանակ արձանագրելով՝ որ չեն յաջողած: 44-օրեայ պատերազմէն յետոյ նախկին իշխանական Հանրապետականը ամիսներ շարունակ մէկ տասնեակէն աւելի քաղաքական ուժերու հետ փողոցային պայքարի անցած էր՝ գործող կառավարութեան հրաժարականի պահանջով:

«Միասնական, համայն քաղաքական ուժերի ներդաշնակու-

թեամբ պայքարի հրամայականից՝ մենք որոշում ենք կայացրել, այնուհանդերձ, մասնակցել այս քաղաքական գործընթացին, քանզի ընդդիմադիր, իրական ընդդիմադիր գրեթէ բոլոր ուժերը այլեւս այդ մասնակցութեան պատրաստակամութիւնը հանրայնօրէն արտայայտել են», - յայտարարեց Աշոտեան:

Իսկ արդեօք ՀՀԿ քննարկած է երկրորդ նախագահ՝ Ռոպերթ Քոչարեանի հետ դաշինք կազմելու հարցը՝ ՀՀԿ փոխ նախագահը բացասական պատասխան տուաւ, նաեւ խուսափեցաւ պատասխանել Ռոպերթ Քոչարեան-Սերժ Սարգսեան յարաբերութիւններուն վերաբերեալ հարցին. «Ստիպուած եմ լինելու արձագանգել մի յարաբերութիւններէ, որոնց մասնակից չեմ: Այնպէս չի, որ ես պատիւ ունեմ լինելու Սերժ Սարգսեանի ու Ռոպերթ Քոչարեանի ընդհանուր ընկերը, հետեւաբար մեկնաբանել իրենց մարդկային յարաբերութիւնները համարում եմ անշնորհակալ գործ»:

Ապրիլեան Պատերազմի Հանգամանքները Ուսումնասիրող Յանձնաժողովի Ձեկոյցը Կը Քննարկուի Փակ Նիստով

Աժ-ի պատգամաւորներու ընդհանուր թիւի 1/5-րդը պաշտօնական գրութեամբ առաջարկած է 2016 թուականի Ապրիլին ծաւալուած ռազմական գործողութիւններու հանգամանքները ուսումնասիրող քննիչ յանձնաժողովի գեկոյցը քննարկել Աժ-ի փակ նիստին:

Մայիս 4-ին, այս մասին Աժ-էն ներս յայտարարեց խորհրդարանի նախագահ՝ Արարատ Միրզոյեան: Հարցը դրուեցաւ քուէարկութեան եւ 71 կողմ, 0 դէմ, 1 ձեռնպահ ձայներով ընդունուեցաւ:

«Լուսաւոր Հայաստան»-էն Տարօն Միմոնեան նկատել տուաւ, թէ հարցը հանրային մեծ հետաքրքրութիւն ունի, դռնփակ քննարկուելու պարագային հանրութիւնը ինչպէս պիտի տեղեկանայ գեկոյցի մանրամասնութիւնները:

Աժ-ի նախագահ՝ Արարատ Միրզոյեան համաձայնեցաւ, որ հարցը հանրային մեծ հետաքրքրութիւն ունի, սակայն ընդգծեց, որ հաշուի պէտք է առնել, որ պետական գաղտնիքներ կը պարունակէ: Հանրութիւնը, ըստ Միրզոյե-

անին, հնարաւորութիւն ունի ծանօթանալ գեկոյցի թոյլատրելի մանրամասնութիւններուն իր ներկայացուցիչներու՝ պատգամաւորներու միջոցով:

«Փաստաթուղթը գաղտնագրուել է, գտնուած է Աժ համապատասխան ստորաբաժանումում: Բոլոր պատգամաւորները պէտք է ծանուցուած լինէին, որ կարող են գնալ եւ մանրամասն ծանօթանալ դրան», - նշեց Միրզոյեան:

Յիշեցնենք, որ աւելի վաղ, քննիչ յանձնաժողովի նախագահ՝ Անդրանիկ Քոչարեան յայտարարած էր, որ թէեւ գեկոյցը չէ հրապարակուած, բայց ինքը ծաւալուն ելոյթ կ'ունենայ անոր մասին:

Աւելի վաղ ամփոփուած էր, որ յանձնաժողովի գործունէութեան ընթացքին հրաւիրուած եւ հարցերու պատասխանած են 19 հիւրեր՝ Սերժ Սարգսեանի գլխաւորութեամբ, պատրաստուած է 97 էջանոց գեկոյց, 80 ժամ տեսաձայնագրութիւն: Միակ անձը, որ հրաժարած է յանձնաժողով ներկայանալ՝ զինուած ուժերու գլխաւոր շտաբի նախկին պետ՝ Եուրի Խաչատուրովն էր:

Գլխաւոր Դատախազը Անդրադարձաւ Մարտի 1-ի Գործով Դատավարութեան Շուրջ Ստեղծուած Իրավիճակին

Գլխաւոր դատախազ՝ Արթուր Դաւթեան Աժ-ի պետական իրաւական հարցերու մշտական յանձնաժողովի նիստին անդրադարձաւ Ռոպերթ Քոչարեանի եւ միւսներու գործով դատավարութեան շուրջ ստեղծուած իրավիճակին:

«Ստեղծուած իրադրութիւնում մենք ինչն ենք վիճարկում Սահմանադրական դատարանում: Երբ որ արարքի որակման հետ կապուած դատարանում տեսնում ենք փոփոխութիւն, Քրէադատավարական օրէնքը մեզ տուել է այդպիսի հնարաւորութիւն՝ վերաորակելու: Բայց այդ հնարաւորութիւնը նախատեսող քրէադատավարական նորմը եւ դրան վճռաբեկ դատարանի ու Սահմանադրական դատարանի կողմից մինչ օրս տրուած մեկնաբանութիւնները վկայում են, որ այդ վերաորակումը կարող է կատարուել միայն փաստական հանգամանքների, պայացուցողական պագայի հետ: Եւ սահնց առիթ հանդիսացաւ, որպէսզի մենք Սահմանադրական դատարանի առաջ բարձրացնենք այդ խնդիրը, ստանանք մեկնաբանութիւն ՄԳ-ից: Մեր ակնկալած մեկնաբանութիւնն այն է, որ, այո, դրանով խախտուած է արդար դատաքննութեան իրաւունքը, դրանով տուժողները իրաւունքներն են խախտուած: Եւ այդ մեկնաբանութեան արդիւնքում հարցնում էք՝ ինչ է լինելու: Ստանալով համապատասխան մեկնաբանութիւնը՝ մենք կարողանալու ենք վերաորակում իրականացնել ընդհանուր նորմի, որից յետոյ օրէնքով սահմանուած կարգով վարոյթը կը շարունակուի», - ըսաւ Դաւթեան:

Դատախազը աւելցուց, որ ՀՀ



Գլխաւոր դատախազ՝ Արթուր Դաւթեան

Քրէական դատավարութեան օրէնսգրքի 309.1 յօդուածը բարելաւման կարիք ունի, որպէսզի այսօրինակ իրավիճակներուն ունենանք պատշաճ արդար դատաքննութեան ապահովման համար արձագանգ:

Նշենք, որ Երեւան քաղաքի ընդհանուր իրաւասութեան դատարանը Ռոպերթ Քոչարեանի, Սէյրան Օհանեանի, Եուրի Խաչատուրովի եւ Արմէն Գէորգեանի նկատմամբ դադրեցուցած էր քրէական հետապնդումը Քրէական օրէնսգրքի 300.1 յօդուածի առաջին մասով:

Ասոր նախորդած էր այն, որ Սահմանադրական դատարանը Քրէական օրէնսգրքի 300.1 յօդուածը ձանաչած էր Սահմանադրութեան 78-րդ (համաչափութեան սկզբունքը) եւ 79-րդ (որոշակիութեան սկզբունքը) յօդուածներուն հակասող եւ անվաւեր:

Ընտրախախտումներու Համար Պատիժները Խստացնող Օրինագիծ

Իշխանութիւնները կը նախատեսեն նախընտրական քարոզչութիւնը խոչընդոտելու համար աւելի խիստ պատասխանատուութիւն սահմանել: Խորհրդարանէն ներս այսօր՝ Ապրիլ 28-ին, առաջին ընթացքում քննարկուեցաւ ու ձայներու 79 կողմ, 2 դէմ յարաբերակցութեամբ ընդունուեցաւ Քրէական օրէնսգրքի մէջ փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին ու կից ներկայացուած օրէնքներու մէջ փոփոխութիւններու եւ լրացումներու փաթեթը:

Առաջարկուող փոփոխութիւններուն փաթեթի հեղինակ՝ «Իմ քայլ»-էն Վահագն Յովակիմեան ընդգծեց, որ ասիկա առաջարկներն մէկն է, իսկ ընդհանուր առմամբ օրէնսդրական այս նախաձեռնութեամբ փորձ կը կատարուի նախ եւ առաջ կանխել խախտումները, իսկ խախտուելու պարագային պատիժը աւելի խիստ ըլլայ, քան նախատեսուածը գործող օրէնքով:

«Մինչեւ յեղափոխութիւնը, ընտրութիւնների ժամանակ չի շում էք ընտրութիւնների դէպքերից, երբ որ ինչ-որ խմբեր փորձում էին ընդդիմութեան քարոզարշաւը խոչընդոտելին, յետոյ մնում էին անպատիժ, որովհետեւ այս նորմը չկար: Այս նորմն այլեւս

կը ստիպի բոլոր այն անձանց, ովքեր կը փորձեն քարոզարշաւը խոչընդոտել, կապ չունի քաղաքական հայեացքներից՝ դիմութիւն, ընդդիմութիւն, եթէ որեւէ մէկը փորձի խոչընդոտել քարոզարշաւը, ինքը պէտք է ենթարկուի քրէական պատասխանատուութեան», - նշեց Յովակիմեան:

Ըստ իշխանական պատգամաւորին՝ ներկայ Քրէական օրէնսգրքին մէջ բացեր կան նաեւ ընտրակաշառքի մասով:

Որեւէ կուսակցութեան մէջ չընդգրկուած Աժ-ի պատգամաւոր՝ Արման Բաբաջանեան կասկածի տակ կը դնէ օրէնսդրական այս փաթեթը:

«Դուք ուղղակի չգիտէք ձեր գլխի գալիքը եւ թէ ինչ արհաւիրք էք բերել: Մենք հիմա խելօք նստել մտածում ենք՝ էլ ինչ անենք, որ Քոչարեանին ու նրա միւս դաւաճան գործակիցներին ու յանցակիցներին թոյլ չտանք, որ ընտրութիւնների վրայ կարողանան հնարաւորինս քիչ ազդեցութիւն գործել: Ես հեռու եմ այն մտքից, որ այս փոփոխութիւններով մեզ յաջողուելու է հիմնարար լուծումներ գտնել ընտրական գործընթացը ազատ, արդար եւ թափանցիկ, ինչպէս դուք էիք նշում, անցկացնել», - նշեց Բաբաջանեան:

# ԼՈՒՐԵՐ

## Հայաստան Պատրաստ է Լայնածավալ Պատուաստումներու. Փաշինեան



Նիկոլ Փաշինեան կը պատուաստուի «Քորոնա» ժահրի դէմ

«Հայաստանը հիմա ունի «Քորոնա» ժահրի դէմ պատուաստանիւթի բաւական մեծ պաշար ձեռք բերած եւ հնարաւորութիւն ունի սկսելու լայնածավալ պատուաստումներ», Մայիս 3-ի Ազգային ժողովի յատուկ նիստի ժամանակ յայտարարեց վարչապետի պաշտօնակատար, վարչապետի թեկնածու՝ Նիկոլ Փաշինեան:

Ան ընդգծեց, որ Հայաստանը թիւերու անկման փուլին է, եւ եթէ պատուաստումը ճիշդ կազմակերպուի, կրնայ արագ ընթացքով յաղթահարել համաճարակը:

«Նոյնիսկ բացասական պատասխանի դէպքում, եթէ քաղաքացին պատուաստուած է, կարող են լինել ճամբորդելու սահմանափակումներ: Բայց նաեւ ուզում եմ ընդգծել, որ միջազգային զբօսաշրջական գործակալութիւնները համար, որպէս ուղղութիւն աշխուժացնելու համար, շատ կարեւոր չափանիշ է ընտրուած, թէ տուեալ երկրում պատուաստումների ինչ մակարդակ է արձանագրուել: Հիմա արդէն Երեւանի, Հայաստանի տարբեր զբօսաշրջային վայրերում կարելի է տեսնել, բարեբախտաբար, զբօսաշրջիկների, եւ եթէ մենք պատուաստման շրջանը ճիշդ կազմակերպենք, կարող ենք վերադարձնել 2019 թուականի

ծաւալները», - ըսաւ Փաշինեան՝ կարեւորելով հիւրանոցներու, հանրային սնունդի կառուցներու եւ սպասարկման ոլորտի ընկերութիւններու աշխատողներու պատուաստման գործընթացի կազմակերպումը:

«Այսօր առաւօտեան մենք Առողջապահութեան նախարարի հետ քննարկում էինք, որ գուցէ պետական ինչ որ տարբերանշան թողարկուի, որ այն ձեռնարկութիւնները՝ կը լինեն ճաշարաններ, հիւրանոցներ եւ այլն, որտեղ աշխատողների 70 եւ աւելի տոկոսը պատուաստուած է, այդտեղ նշուի, որ այդ ընկերութիւններում գտնուելը, նրանք ծառայութիւններից օգտուելը համեմատաբար կամ ընդհանուր առմամբ անվտանգ է», - յայտարարեց վարչապետի պաշտօնակատարը՝ կոչ ընելով յատկապէս հանրային առաջնորդներուն սեփական օրինակով իր ցոյց դնելու այդ ընթացքի կարեւորութիւնը:

Նշենք, որ Նիկոլ Փաշինեան իր տիկնոջ՝ Աննա Յակոբեանի հետ Մայիս 3-ին, պատուաստուած է «Քորոնա» ժահրի դէմ: Պատգամաւոր՝ Թագուհի Թովմասեանի հարցին, թէ ո՞ր պատուաստով պատուաստուած են, վարչապետի պաշտօնակատարը պատասխանեց, թէ չըսէր անոր անունը:

## Պայտընի Վարչակազմը Պիտի Չսառեցնէ

Շարունակուած էջ 1-էն

նեցնել ատրպէյճանական զօրքերու առաջխաղացումը դէպի Ղարաբաղ: «Վարչակազմը պէտք է ամբողջութեամբ կեանքի կոչէ 907-րդ լրացումը, դադարեցնելով ռազմական սարքերու հոսքը Ատրպէյճան», - պատերազմի օրերուն յայտարարած էր այն ժամանակ դեռ նախագահի թեկնածու՝ ձօ Պայտըն:

Նախագահական ընտրութիւններէն ու Պայտընի յաղթանակէն յետոյ, այդ տեսակէտը նաեւ պետական քարտուղարի թեկնածու՝ Էնթոնի Պլինքըն պաշտպանած էր գոնկրէսական լուծումներուն: «Եթէ ես հաստատուիմ պետական քարտուղարի պաշտօնին, կ'աշխուժացնեմ ԱՄՆ-ի ջանքերը՝ գտնելու Ղարաբաղի խնդրի յարատեւ կարգաւորում, որ կ'երաշխաւորէ Լեռնային Ղարաբաղի անվտանգութիւնը եւ կը բացառէ նոր պատերազմի բռնկումը», - ըսած էր Պլինքըն՝ հաւաստիացնելով, որ Պայտընի վարչակազմը պատրաստ

է հարկ եղած պարագային գործի դնել թիւ 907 լրացումը ու դադարեցնել Ատրպէյճանին յատկացուող օժանդակութիւնը:

Այս տարուայ Փետրուարին, աւելի քան հարիւր գոնկրէսականներ, թէ՛ դեմոկրատական, թէ՛ հանրապետական ճամբարներէն կոչ ըրած էին նոր վարչակազմին հաւատարիմ մնալու այդ խոստումներուն եւ պատժամիջոցներ կիրառելու Ատրպէյճանի եւ Թուրքիոյ բարձրաստիճան պաշտօնեաներու նկատմամբ եւ կասեցնելու ամերիկեան օժանդակութեան տրամադրումը Պաքուին:

Անցած շաբաթ, սակայն, պարզ դարձաւ, որ Պայտընի վարչակազմը առայժմ չի պատրաստուի կտրուկ փոփոխութիւններ ընել: Ապրիլ 28-ին Ատրպէյճանի նախագահական նստավայրը հաղորդեց, որ Իլհամ Ալիեւի հետ առաջին հեռախօսազրոյցի ընթացքին, պետական քարտուղարը հաւաստիացուցած է, որ Ուաշինկթոն կը շարունակէ ռազմական օժանդակութիւնը Պաքուին:

## Անգարա Առայժմ Կը Խուսափի ԱՄՆ-ի Հետ Դիմակայութենէ

«Ռոյթըրզ» լրատուական ծառայութեան վերլուծաբաններ՝ Օրհան Քոչկուն եւ Տոմենիկ Էւանս նշած են, որ հակառակ ԱՄՆ-ի նախագահին կողմէ Հայոց Յեղապանութիւնը ճանաչելու յայտարարութիւնը վրդովմունք յառաջացուցած է Թուրքիոյ մէջ, Անգարան տուեալ հանգրուանին կը խուսափի դիմակայութենէ, ինչ որ կարող է վնաս հասցնել իր փխրուն տնտեսութեան եւ փշրել ԱՄՆ-ի դաշնակից արաբական երկիրներու հետ յարաբերութիւնները կարգաւորելու յոյսերը:

Սովորաբար մարտական գործող Թուրքիոյ առաջնորդը, որ յաճախ կ'օգտագործէ արտաքին վիճաբանութիւնները ներքին աջակցութիւնը հաւաքելու համար, հիմա աւելի շատ կ'եղբոնացած է թուլացած տնտեսութիւնը վերականգնելու վրայ, ինչ որ, ըստ վերլուծաբաններու, անոր վերընտրուելու հեռանկարի բանալին է:

2023-ի ընտրութիւններուն յաղթելու, իշխանութեան երրորդ տասնամեակը մտնելու էրտողանի առիթները կախուած են երկրի տնտեսական իրավիճակը վերականգնելու անոր ունակութիւններէն: Հիմնականին մէջ, Պայտընի պատմական յայտարարութեան յետոյ, էրտողան որեւէ յստակ պատասխան քայլերու մասին չէ խօսած եւ հարցին անդրադարձած է միայն մէկ անգամ: Այդ նոյն ելոյթին, ուր էրտողան քննադատած է Պայտըն «անհիմն», անարդար եւ ճշմարտութեան չհամապատասխանող» յայտարարութեան համար, միեւնոյն ժամանակ ընդգծած է, որ երկու առաջնորդները կրնան նոր փուլ սկսիլ, երբ Յունիսին կայա-

նայ անոնց առաջին հանդիպումը:

Վերլուծաբանները բացատրած են նաեւ, թէ Թուրքիոյ նախագահի համեմատաբար մեղմ ոճը կապուած է տարածաշրջանային իրավիճակով. վերջին տարիներուն Անգարայի ռազմական ներխուժումները եւ յարձակողական արտաքին քաղաքականութիւնը մեծցուցած է Թուրքիոյ կոշտ ուժը, բայց եւ մեկուսացուցած զայն Միջերկրականի արեւելքի եւ Մերձաւոր Արեւելքի մէջ, ու անցեալ տարեվերջը, Թուրքիան կը ձգտէր բարելաւել թուլացած կապերը Արեւմուտքի եւ արաբական աշխարհին հետ:

Ուաշինկթոնի եւ Անգարայի յարաբերութիւնները արդէն լարուած էին ուսական S-400 (C-400) հրթիռային համակարգերը Թուրքիոյ կողմէ գնելու հետեւանքով, ինչպէս նաեւ Սուրիոյ քիւրտերուն ԱՄՆ-ի աջակցութեան պատճառով: Անգարան սուրիացի քիւրտերը կը կապէ գրոհայիններու հետ, որոնք քանի մը տասնամեակ յարձակումներ եւ խռովութիւններ կը կատարեն Թուրքիոյ մէջ: Ի տարբերութիւն նախորդ նախագահ՝ Տանըլտ Թրամփին, որ յաճախ հեռախօսազրոյց կ'ունենար էրտողանի հետ, ձօ Պայտըն հեռաւորութիւն կը պահէ, իսկ անոր վարչակազմը կը քննադատէ Անգարան մարդու իրաւունքներու իրավիճակին համար: Պայտընը ստանձնելէն ի վեր աւելի քան 3 ամիս է Պայտըն չէ խօսած էրտողանի հետ, անոնց առաջին հեռախօսազրոյցը տեղի ունեցած է Ապրիլ 24-ի նախօրէին, երբ Պայտըն էրդողանին տեղեկացուցած է Հայոց Յեղապանութիւնը ճանաչելու մտադրութեան մասին:

## Ատրպէյճանցի Զինճառայողները Խոշտանգած Եւ Սպաննած Են 19 Հայ Գերիներ

Ատրպէյճանցի զինճառայողները 44-օրեայ պատերազմի աւարտէն յետոյ խոշտանգած եւ սպաննած են 19 հայ գերիներ: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնփրէս»-ը, այս մասին Դիմատետրի իր էջին վրայ գրած է Միեւ-ի (Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանի) գերիներու ու ռազմագերիներու շահերու ներկայացուցիչ՝ Արտակ Զէյնալեան:

«2020 թուականի Սեպտեմբերի 27-ին սկսուած արցախեան երկրորդ պատերազմի ընթացքում, ինչպէս նաեւ 2020 թ.-ի Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան

ստորագրումից յետոյ, շարունակուել են գերեվարուել ազգութեամբ հայ քաղաքացիական անձինք եւ զինճառայողներ:

Գերութեան մեջ յայտնուած անձանցից 19-ը, խոշտանգուել ու սպանուել են ատրպէյճանական զինճառայողների կողմից, ինչը համարուած է ռազմական յանցագործութիւն:

Ռազմագերիները, ազատագրուած անձանց խոշտանգելու, սպանելու փաստերի առնչութեամբ դիմել ենք Մարդու իրաւունքների եւրոպական դատարան»:

## Եւրոպական Խորհրդարանի 120 Անդամներ

Շարունակուած էջ 1-էն

հոգիի պարագային, Ատրպէյճան խոստովանած է, որ այդ մարդիկ իր մօտ են: 112 մարդու պարագային Ատրպէյճան որեւէ տեղեկատուութիւն չէ տրամադրած, եւս 61 անձանց գերեվարութեան մասին տեղեկութիւնները Ատրպէյճանի իշխանութիւնները կտրականապէս կը հերքեն, չնայած այն հանգամանքին, որ փաստերը հակառակը կը վկայեն», - նշած են նամակի հեղի-

նակները, պնդելով նաեւ, որ Ատրպէյճանի գործողութիւնները «ժընեւեան համաձայնագրի յստակ եւ բացարձակ խախտում են»:

«ԵՄ այլեւս չի կրնար Հայաստանը ձգել նման անտանելի վիճակի մէջ: Հարկաւոր է դիմել այնպիսի քայլերու, որոնք թոյլ չեն տար, որ բռնի ուժը անգամ մը եւս գերակայութիւն ստանայ օրէնքին հանդէպ», - նշուած է Եւրոպական խորհրդարանի 120 անդամներու կողմէ ստորագրուած նամակին մէջ:

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱԿԱՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# Հայաստան Կը Դատապարտէ Շուշիի Ղազանչեցոց Եկեղեցւոյ Մէջ Կատարուող Գործողութիւնները



Ատրպէյճան կը փոխէ Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց տաճարի պատմաճարտարապետական ամբողջականութիւնը, անդրադառնալով հայկական եկեղեցւոյ գմբեթները հանելու վերաբերեալ տեղեկութիւններուն, կ'հազարապէս Հայաստանի Արտաքին գործոց նախարարութիւնը:

«Յատկանշական է, որ Ատրպէյճանը Շուշիի Մայր տաճարի հետ կապուած գործողութիւններ է իրականացնում առանց Հայ առաքելական եկեղեցու հետ խորհրդակցելու, ինչն ակնյայտօրէն խախտում է Հայ հաւատացեալները կրօնի ազատութեան իրաւունքը: Նոյնքան մտահոգիչ է, որ Ատրպէյճանը սկսել է եկեղեցու ճարտարապետական տեսքի փոփոխման աշխատանքներ կատարել մինչեւ ԵՈՒՆԵՍԿՕ-ի փորձագէտները գնահատման առաքելութեան կողմից աշխատանքների սկսումը: Ակնյայտ է, որ Ատրպէյճանը դիտաւորեալ արգելափակում է ԵՈՒՆԵՍԿՕ-ի փորձագէտները մուտքը դէպի վտանգուած հայկական մշակութային ժառանգութեան վայրեր՝ մի կողմից քողարկելու իր կողմից իրականացուած պատերազմական յանցագործութիւնները, իսկ միւս կողմից՝ փոխելու յուշարձանի պատմաճարտարապետական ամբողջականութիւնը»,- նշած է Հայաստանի արտաքին գերատեսչութիւնը:

Որ Մայիս 9-ին ընդառաջ Շուշիի Սուրբ Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցւոյ գմբեթները կը հանուին, դեռ երէկ համացանցով գրառում կատարեց Արցախի ներքին գործոց նախարարութեան տեղեկատուութեան բաժնի պետ՝ Յունան Թադևոսեան՝ կից տեղադրելով լուսանկարներ: Հայկական հետքն ու դիմագիծը, հոգեւոր ու մշակութային ժառանգութիւնը Ատրպէյճանը կը վերացնէ վերանորոգման ու վերականգման անուան տակ՝ կ'հազարապէս հայկական կողմը, բայց անարձագանգ:

19-րդ դարուն կառուցուած Ղազանչեցոց եկեղեցին մէկ անգամ վնասուած է 1920-ին Շուշիի հայ բնակչութեան ջարդերու ժամանակ եւ ատրպէյճանցիներու կողմէն օգտագործուած, որպէս պահեստ: Եկեղեցին վերականգնուած էր 90-ականներու պատերազմէն յետոյ, երբ հայկական ուժերը գրաւեցին բերդաքաղաքը: Եկեղեցւոյ վերակառուցուած գմբեթը կրկին վնասուեցաւ 44-օրեայ պատերազմի ժամանակ՝ մէկ օրուայ մէջ Ատրպէյճանի կրկնակի հրթիռակոծման հետեւանքով:

## Փաշինեան Զընտրուեցաւ Վարչապետ

Շարունակուած էջ 1-էն

դարձրէք. 2015 թուականի աշնան եւ 2016 թուականի ձմրան, որից յետոյ եկել է 2016 թուականի գարունը եւ եղել է Ապրիլի 2: Այդ բանակցային բովանդակութիւնը փոխուել է հենց այդ ժամանակ, եւ դա ապացուցող փաստաթղթեր կան: 5+2, եկէք խոստովանենք, որ այդպիսի հնարաւորութիւն, ըստ էութեան, երբեք չի եղել, որովհետեւ դեռեւս 2016 թուականին իր տուած հարցազրոյցում Սերժ Սարգսեանը խօսում է 7 շրջանների մասին: Ինքը ասում է, որ հայկական կողմն ասում էր՝ մենք թողնում ենք 7 շրջանները, իսկ ատրպէյճանական կողմն ասում էր՝ ոչ», - ներկայացուց Փաշինեան:

Նիկոլ Փաշինեան նաեւ պարզաբանեց, թէ պատերազմի ընթացքին իրավիճակի մասին ինչու իրավիճակը բաց կերպով չէ ներկայացուած հանրութեան:

«Մեզ ասում են, թէ ինչու

# Կարօ Փայլան Թուրքիոյ Մէջ Կան Գործիչներ Որոնք Ողջունեցին Պայտընի Յայտարարութիւնը

Թուրքիոյ Մէջ կան քաղաքական գործիչներ, որոնք ողջունած են ԱՄՆ-ի նախագահ՝ Ժո Պայտընի յայտարարութիւնը Հայոց Յեղասպանութեան ճանաչման վերաբերեալ՝ «Ազատութիւն»-ի հետ զրոյցի ընթացքին ըսաւ Թուրքիոյ խորհրդարանի անդամ, հայագրի Կարօ Փայլան:

«Անշուշտ [կան այսպիսի գործիչներ]: Իմ կուսակցութեանն է Թուրքիոյ խորհրդարան անցած բոլոր պատգամաւորները պատրաստ են ճանաչել Հայոց Յեղասպանութիւնը, առերեսուել ցեղասպանութեան հետ: Մեր՝ Ժողովրդական ժողովրդավարական կուսակցութեան կեդրոնական կոմիտէն յայտարարութիւն տարածեց, ըստ որում Թուրքիան պէտք է առերեսուի Հայոց ցեղասպանութեան հետ», - ըսաւ Փայլան՝ շարունակելով - «Այլ կուսակցութիւններ նոյնպէս ունին անդամներ, որոնք պատրաստ են առերեսուիլ Հայոց Յեղասպանութեան հետ, սակայն համարձակութիւն չունին հրապարակաւ յայտարարելու այդ մասին: Դժբախտաբար, Թուրքիոյ չորս հիմնական կուսակցութիւնները, որոնցմէ երկուքը աշխարհիկ են, երկուքը՝ ազգայնական, որդեգրած են ցեղասպանութիւնը մերժելու դիրքորոշում»:

Կարօ Փայլան յիշեցուց, թէ Թուրքիոյ իշխանութիւնները տասնամեակներ շարունակ վարած են Հայոց ցեղասպանութիւնը մերժելու քաղաքականութիւն:

« 80 տարի լռութիւն էր, բայց

Հրանդ Տինքի ու այլ ժողովրդավար անձերու շնորհիւ կարողացանք խօսիլ Հայոց Յեղասպանութեան մասին, սակայն թրքական հասարակութիւնը պատրաստ չէր տեղի ունեցածը կոչել «ցեղասպանութիւն», բայց պատրաստ էին ըսել, որ ինչ որ նման բան տեղի ունեցած է: Դժբախտաբար, 2015 թուականէն յետոյ էրտողան իշխանութեան ղեկին հաստատեց ազգայնական դաշինք՝ իր ազգայնական գործընկերոջ հետ: Նախորդ հինգ տարիներուն կորսնցուցինք գրեթէ ամէն ինչ, եւ այժմ Թուրքիա կ'ապրինք մերժման հին քաղաքականութեան ներքոյ», - ընդգծեց հայագրի գործիչը:

«Թուրքիա քաղաքական գործիչները ունին իրենց ազդեցութիւնը հասարակութեան վրայ: Հինգ տարի առաջ էրտողան ըսաւ, որ ինչ որ բան տեղի ունեցած է, եւ կը ցաւակցին հայ համայնքին, սակայն այսօր ան կրկին կը հետեւի Հայոց ցեղասպանութեան մերժման քաղաքականութեան: Երբ առաջանորդները կը հետեւին նման՝ մերժման քաղաքականութեան, հասարակութիւնը կ'իջնայ անոր ազդեցութեան տակ: Այսօր Հայոց ցեղասպանութեան մերժումը օրակարգի վրայ է, բայց Թուրքիա կան միլիոնաւոր մարդիկ, որոնք պատրաստ են ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը: Մենք պարզապէս կը փորձենք ներազդել Թուրք ժողովուրդին վրայ՝ ճանաչելու Հայոց Յեղասպանութիւնը», - ըսաւ Կարօ Փայլան:

## Իտալական Պարբերականը Ուրուկուայի Հայութեան Մասին

Շարունակուած էջ 1-էն

կը տանի իր ինքնութեան: Անոր նման այս երկրին մէջ կայ շուրջ տասնհինգ հազար հայ, որոնք երախտապարտ են Ուրուկուային՝ որ դարձած է աշխարհի առաջին երկիրը որ 1965-ին ընդունուած օրէնքով ճանչցած է «Մեծ Եղեռնը»՝ Հայոց ցեղասպանութիւնը», կը գրէ իտալացի լրագրողը:

Մանրամասն ներկայացնելէ ետք 1915-1916 թուականներու իրադարձութիւնները, Թուրքիոյ կողմէ փաստերու ժխտումը, Հայերու Ուրուկուայ ներգաղթը եւ Յեղասպանութեան 100-ամեակին առթիւ Հռոմի Պապի Հայաստան այցելութիւնը, լրագրողը կը գրէ, որ 1920-ական թուականներէն սկսեալ, բազմաթիւ այլ ազգերու շարքին Հայեր հաստատուած են Ուրուկուայ:

«Անոնք կորսուած էին: Անոնք զաղափար չունէին թէ ուր եկած էին եւ ոչինչ ունէին իրենց ձեռքին», ըսաւ համայնքի մտաւորականներէն Տիէկօ Գարամանուկեան, որ սահուն կը խօսի հայերէն եւ կը վարէ «Ռատիօ Արաքս» մշակութային հաղորդումները»:

Ծառայ էր: Ան եկած է այստեղ ոչ թէ աշխատանք փնտնելու, այլ սպանդէն խուսափելու համար: Ինքնութեան հետ գործ ունենալը պատասխան է ցեղասպանութեան ժխտման, որ կը շարունակուի մինչ օրս», - բացատրած է Դանիէլ Մանուէլեան:

«Ան եւ Տիէկոն առաջնորդներ են Հնչակեան կուսակցութեան, Հայ Սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան, որ ներկայ է շատ երկրներու մէջ, որոնց շարքին՝ Լիբանան, ԱՄՆ եւ նոյնիսկ Ուրուկուայ: Այս հարցազրոյցի համար անոնք մեզ ընդունեցին «Casa Armenia»-այն (Հայկական Տուն) ներս՝ Մոնթեվիտոյի արեւմտային գտնուող Պրատոյի բնակելի թաղամասի վրայ գտնուող գեղեցիկ շէնքէն ներս՝ պարտէզով: Այդ կուսակցութեան նստավայրն է, մշակուցի, սպորտի եւ երեկոյթներու վայր»:

«Անհաւատալի է մտածել, թէ ինչպէս խումբ մը մարդիկ, որոնք եկած էին ծածկուած միայն լաթերով, կարճ ժամանակուայ մէջ ոչ միայն աշխատանք գտան եւ ընտանիքներ ստեղծեցին, այլ կազմակերպեցին համայնքը, հիմնադրեցին դպրոցներ, եկեղեցիներ, միութիւններ, թերթեր, ռատիոկայաններ, երգչախումբեր, եւ երաժշտական փառատօներ: Անոնք մշակեցին Օսմանեան կայսրութեան կողմէ հալածուող ինքնութիւնը, անոնք փրկեցին այն մոռացուած թեմէն», - հպարտօրէն պատմած է Տիէկոն՝ նկարագրելով Ուրուկուայի առաջին հայերու գործունէութիւնը:

### Պարոն Նախագահ, Շնորհակալութիւն Զայոց Ցեղասպանութիւնը Ծանաչելու Զամար



Հայոց Ցեղասպանութեան 106-րդ տարելիցին ընդառաջ «Արուեստի Խաղաղութիւնը» կազմակերպութիւնը [www.peaceofart.org](http://www.peaceofart.org) 2021թ-ի Մարտ ամսուն սկսաւ իր ամենամեայ քարոզարշաւը՝ էլեկտրոնային վահանակներ տեղադրելով ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգին մէջ: Այս տարուան վահանակներու կարգախօսն էր. «Պարոն նախագահ, արժանապատուութեամբ եւ խիզախութեամբ ճանչցէ՛ք Հայոց Ցեղասպանութիւնը»:

Լրատուամիջոցները արագ արձագանքեցին, ինչպէս նաեւ հեռարձակուեցաւ Հայաստանի հանրային հեռուստատեսութեամբ: Արդիւնքը նկատելի էր, ընթացքին մենք ստացանք բազմաթիւ նամակներ եւ հեռախօսազանգեր, ինչպէս ժխտող-

Մեր կազմակերպութեան ամենամեայ քարոզարշաւի վերջին վահանակը բարձրացաւ Նախագահ Ճօ Պայտրոնին շնորհակալական ուղերձով: Վահանակը կը տարբերի նախորդէն՝ զիրար փոխարինող երկու պատուաններով: Առաջին պատուանով մենք շնորհակալութիւն կը յայտնենք Նախագահին Հայոց Ցեղասպանութիւնը ճանչնալու համար, իսկ երկրորդը կը մէջբերէ նախագահ Պայտրոնի յայտարարութենէն Հայոց Ցեղասպանութեան յիշատակի օրուան կապակցութեամբ: «Ամերիկացի ժողովուրդը կը յարգէ յիշատակը բոլոր այն հայերուն, որոնք դարձան ցեղասպանութեան զոհը 106 տարի առաջ այս օրը»: Նախագահ Ճօ Պայտրոն Ապրիլի 24 2021»:



ներու, այնպէս ալ համակիրներու կողմէ: Մարտի 17ին ստացանք առաջարկ օժանդակելու նմանատիպ վահանակի տեղադրումը Քլիվլենտի մէջ: Իսկ Մարտի 19-ին Ֆիլատելֆիայի Հայոց Ցեղասպանութեան յիշատակման կոմիտէն բարձր գնահատելով մեր նախաձեռնութիւնը՝ առաջարկեց նմանատիպ էլեկտրոնային վահանակներ բարձրացնել նաեւ Ֆիլատելֆիայի մէջ եւ հովանաւորել ատոնք: Ինչպէս նաեւ, Ապրիլ ամսուան ընթացքին, Մասաչուսեթսի մէջ տեղադրուեցան լրացուցիչ էլեկտրոնային վահանակներ, որոնք հովանաւորուեցան "Merrimack Valley"-ի Հայ Դատի Յանձնախումբի կողմէ: Ապրիլի 24-ին նախագահ Պայտրոնը յարգեց իր նախընտրական խոստումը՝ ճանչնալով Հայոց Ցեղասպանութիւնը: «Արուեստի Խաղաղութիւնը» կազմակերպութիւնը վերջին քսանհինգ տարիներու ընթացքին շարունակաբար եւ հաստատակամօրէն կոչ կ'ընէր Ամերիկային ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը ...

«Արուեստի Խաղաղութիւնը» կազմակերպութիւնը պաշտօնապէս հիմնադրուած է 2003 թ.-ին Մասաչուսեթս նահանգին մէջ, բայց անոր գործունէութիւնը սկսած է դեռեւս 1996 թ.-էն: "Peace of Art Inc, [www.peaceofart.org](http://www.peaceofart.org) Այն անշահութիւն կազմակերպութիւն է, չունի կուսակցական կամ կրօնական ուղղութիւն: «Արուեստի Խաղաղութիւնը» կազմակերպութիւնը կ'օգտագործէ արուեստի համընդհանուր լեզուն՝ մարդկանց բարօրութեան, հակամարտութիւններու խաղաղ լուծման, Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման: «Արուեստի Խաղաղութիւնը» կազմակերպութիւնը ձօնուած է աշխարհի մէջ խաղաղութեան պահպաններուն եւ բոլոր անոնց, որոնք իրենց կեանքը կը վտանգեն մարդկանց բարօրութեան համար: Հիմնադրման օրէն ի վեր «Արուեստի Խաղաղութիւնը» չէ խնդրած եւ չէ ստացած որեւէ նիւթական օժանդակութիւն անհատական, պետական, կամ այլ արդիւններէ:

### Վախճանեցաւ Տ. Գիւտ Արք. Նագգաշեան

Մոսկուայի դաշնագրին ստորագրութեան 100-ամեակին առիթով (16 Մարտ 1921) Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարեց, որ համաձայնագիրը՝ «ճշդելով մեր երիտասարդ հանրապետութեան արեւելեան սահմանները Առաջին համաշխարհային պատերազմէն ետք, ծառայած է նաեւ իբրեւ համերաշխութեան եւ համագործակցութեան հիմք Ռուսիոյ Սովետական Դաշնակցային Ընկերակցական Հանրապետութեան հետ»՝ աւելցնելով, որ երկու երկիրները կը շարունակեն երկխօսութիւնն ու համագործակցութիւնը շրջանային հարցերու եւ փոխադարձ յարաբերութիւններու մակարդակին վրայ: Տեղին է նշել, որ համաձայնագրի կնքման պահուն, ո՛չ Թուրքիոյ Հանրապետութիւնը, ոչ ալ Խորհրդային Միութիւնը (ԽՍՀՄ) ստեղծուած չէին իբրեւ քաղաքական ճանչցուած միաւորներ:

Իր կարգին, Մոսկուայի դաշնագրի հարիւրամեակին անդրադառնալով, Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարիա Զախարովա նշեց, որ «Թուրքիա եւ Ռուսիա կը շարունակեն երկխօսութիւնն ու համագործակցութիւնը փոխադարձ եւ շրջանային յարաբերութիւններու մակարդակներու վրայ»՝ աւելցնելով. «մենք կը հաւատանք, որ համագործակցութեան այս հասկացողութիւնը (դրսեւորուած դաշնագրին մէջ) կը շարունակուի այնպէս, որ մեր երկկողմանի յարաբերութիւնները նպաստեն շրջանային խաղաղութեան, կայունութեան եւ բարգաւաճումին»:

Նոյնպէս դաշնագրին հարիւրամեակին առիթով, Մոսկուայի պետական համալսարանի ասիական եւ արեւելեան հարցերու ուսումնասիրութեան բաժանմունքի դասախօսներէն՝ փրոֆ. Մեհմեդ Փերինչէք յայտնեց, որ «Առաջին համաշխարհային պատերազմէն ետք, ինչպէս յայտարարած է Մուստաֆա Քեմալ Աթաթուրք, արեւմտեան կայսերապաշտ պետութիւնները Հարաւային Կովկասի մէջ ստեղծեցին «կովկասեան պատը»: Աթաթուրքին համար, կովկասեան պատին վերացումը անհրաժեշտ էր «անկախութեան պատերազմին» յաջողութեան համար: Ուստի, 26 Ապրիլ 1920-ին, ան նամակ մը ուղարկեց Լենինին՝ առաջարկելով ոչնչացնել Հարաւային Կովկասի մէջ բրիտանացիներուն հետ համագործակցող կառավարութիւնները: Այսպիսով, թրքական եւ կարմիր բանակներու համագործակցութեամբ, Հարաւային Կովկասի մէջ կարճաւ զարմալ վերացնել Դաշնակցական եւ Մենշեւիկ կառավարութիւնները: Այս համագործակցութիւնը առաջնորդեց Հարաւային Կովկասի մէջ խաղաղութեան հաստատման: Թուրքեւոսու այս համագործակցութեամբ կարելի դարձաւ թէ՛ իր լրումին հասցնել Թուրքիոյ «Անկախութեան պատերազմը», թէ՛ ալ ձեռքազատիլ բրիտանացիներու ազակցութիւնը վայելող կառավարութիւններէն, որոնք սպառնալիք կը հանդիսանային Ռուսիոյ Հոկտեմբերեան յեղափոխութեան: Այս համագործակցութեան պատճառով ստորագրուեցաւ Մոսկուայի պայմանագիրը»:



Թուրքիոյ եւ Ռուսիոյ յարաբերութիւնները, իբրեւ կայսերական ու աշխարհակալ դրացի ուժեր, պատմականօրէն ունեցած են հակոտնեայ նկարագիր, որ 16-րդ դարէն մինչեւ 1921՝ Մոսկուայի դաշնագիրը, պատճառ դարձած է աւելի քան տասը պատերազմի: Ժիշդ է, որ վախնալով Խորհրդային Միութեան սպառնալիքէն, Թուրքիա 1952-ին անդամակցեցաւ ՆԱՅՕ-ի, սակայն պաղ պատերազմի աւարտէն ետք, այդ սպառնալիքը մեղմացաւ՝ առիթ ստեղծելով Մոսկուայի հետ աւելի գործնապաշտ յարաբերութիւններու: 2001-ին, երկու երկիրները ստորագրեցին համագործակցութեան համաձայնագիր մը՝ մրցակցելու փոխարէն համատեղ աշխատելու մտադրութեամբ: 2004-ին, Վլատիմիր Պութին դարձաւ ռուս առաջին նախագահը, որ Թուրքիա կ'այցելէ: Երկու երկիրներու գործակցութիւնը կը զարգանայ եւ 2011-ին, Թուրքիա կը դառնայ Ռուսիոյ առեւտուրի երկրորդ մեծագոյն գործընկերը տարեկան \$30 միլիարդ տոյարով (արտածում՝ \$6 միլիարդ, ներածում՝ \$24 միլիարդ), իսկ երկկողմանի առեւտուրի հիմնական կէտը կը հանդիսանայ ուժանիւթը (ներածումներու 70% համեմատութիւնը, \$21 միլիարդ):

Համագործակցութեան այս մթնոլորտը ցնցումի կ'ենթարկուի 2015-ին, երբ սուրիական սահմանին վրայ Թուրքիա վար կ'առնէ ռուսական զինուորական օդանավներ: Իսկ մէկ տարի ետք, Անգարայի մէջ Ռուսիոյ դեսպանին սպանութիւնը կը նկատուի երկու երկիրներուն միջեւ պատերազմի բռնկումի շարժառիթ մը, սակայն զարմանալիօրէն, երկու երկիրներու յարաբերութիւնները այդ վատ վիճակէն միանգամայն կը դառնան աւելի սիրալիւր:

Մինչ Միացեալ Նահանգներու հետ Թուրքիոյ յարաբերութիւնները, լաւ թէ վատ, կ'ընթանան հաստատութեանական միջոցներով, Ռուսիոյ հետ անոր կապերը ամբողջովին հիմնուած են անձնական կապերու վրայ: Կ'ըսուի, որ նախագահ Պուտին ինք նախազգուշացած է էրտողանը 2016-ի պետական հարուածի փորձին մասին, եւ առաջինը ինք շնորհաւորած է Թուրքիոյ նախագահը՝ երբ յեղաշրջման փորձը ձախողութեան մատնուած է: Այդ օրէն ի վեր, աշխարհի առաջնորդներու շարքին, երկու նախագահները ամէնէն աւելի գլուխ գլխի հանդիպումներ ունեցած են: Եւրոպական Միութեան ան-

դամակցելու Թուրքիոյ բոլոր ճիգերը, մանաւանդ ներկայիս, կը մնան ապարդիւն: Սակայն, օրինակի համար, փոխանակ իր աչքերը դէպի Զինաստան դարձնելու եւ աշխարհաքաղաքական իր դիրքը օգտագործելով Մետաքսի նոր ճամբու նախաձեռնութեան ընձեռած կարելիութիւններէն առաւելագոյն օգտուելու, եւ միաժամանակ իր կապերը աշխուժացնելու Կեդրոնական Ասիոյ թրքական ժողովուրդներուն հետ, այժմ Ռուսիան է, որ առանցքային կարեւորութիւն կը ներկայացնէ Թուրքիոյ համար, եւ՝ փոխադարձաբար: Այս մէկը լաւագոյնս կ'արտայայտուի ռուսական S-400 հակօդային պաշտպանութեան համակարգ գնելու որոշումով: Այս քայլով, Թուրքիա ոչ միայն կը գրկուի ամերիկեան F-35 պատերազմական օդանավներէն, այլեւ, որ աւելի կարեւոր է, ան համարձակօրէն դուրս կու գայ իր արեւմտամէտ քաղաքականութենէն՝ յօգուտ Ռուսիոյ:

Զարմանալիօրէն, երկու երկիրներու փոխադարձ շահերը եւ

տնտեսական կապերը չեն միակ վճռորոշ ազդակները, այլ անոնց աճող արտաքին քաղաքական յակնութիւնները կը նպաստեն հասարակաց լեզու գտնելու, թէեւ այն վայրերուն մէջ, ուր երկու կողմերը հակասական նպատակներ ունին, անոնք կը յանգին բախումներու, ինչպէս՝ Սուրիոյ եւ Լիպիոյ մէջ, բայց ոչ, օրինակ, մեր 44-օրեայ պատերազմին ընթացքին: Ընդունելով այս հակասութիւնը, 2020 Հոկտեմբերին, Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերգէյ Լաւրով կը նշէ, որ «թէեւ Թուրքիա երբեք Ռուսիոյ ռազմավարական դաշնակիցը չէ եղած, սակայն ան բարեկամ է, շատ մօտ գործընկեր, եւ բազմաթիւ մարզերու մէջ, այս համագործակցութիւնը ռազմավարական բնույթ ունի»:

Տաք ջուրեր (Միջերկրական ծով) իջնելու Մոսկուայի քաղաքականութիւնը ծանօթ է բոլորին: Այս առաջադրանքը կարելի չէ իրագործել առանց Թուրքիոյ հետ հաշտ յարաբերութեան: Այս առումով, բարացուցական է Հարաբարի 44-օրեայ պատերազմը: Մինչ մէկ կողմէ, Անգարա-Մոսկուա-Պաքու առանցքը հետամուտ կ'ըլլար այսպէս կոչուած Ատրպէյճանի «տարած քային ամբողջակամութեան», անդին, պատերազմէն յետոյ, իբրեւ փոխադարձ քայլ Ռուսիոյ կողմէ, Նախիջևեանի միջանցքը բանալու որոշումը ճամբայ կու տար Թուրքիոյ հասնելու Կեդրոնական Ասիա: Նախիջևեանի միջանցքին բացումը նաեւ կարելի կ'ընայ ըլլալ թուրք-ռուսական համագործակցութեան միջոցով: Ըստ երեւոյթին, Ռուսիա շատ ալ դէմ չէ եւ նոյնիսկ համաձայն է Թրքական միւս հանրապետութիւններուն հետ Թուրքիոյ մերձեցման: Կ'ենթադրուի նա-

Շար.ը էջ 15



**ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION**  
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Announces the opening of the

# 2021 AEBU Scholarship Program

Empowering Our Youth for a Brighter Future

To apply, visit our website  
**WWW.AEBU.ORG**

**APPLY NOW**  
Through June 31, 2021

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

626•344•7321  
AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE  
1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104

# Սուրբ Քաղաքի Կապոյտ Հնայքի 100-ամեայ Ուղին



## ՊԱՊԻՆ ՍՈՒՐԱԴԵԱՆ

17-րդ դարի սկզբին Իզնիկում հայերը զբաղվել են խեցեգործությամբ, որից յետոյ 17-րդ դարից սկսած Կոստանայում տարածվում է խեցեգործության արուեստը:

Կոմիտաս վարդապետի ծննդավայր Կոստանայի նշանավոր յախճապակու արուեստին տիրապետող երեք հայեր՝ յայտնի կապործ Նշան Պալեանը, շնորհալի գծագրող Մկրտիչ Կարակաշեանը եւ հայկական խեցեգործության վաստակավոր մասնագետ Դաւիթ Յովհաննիսեանն իրենց ընտանիքներով անգլիացիների հրաւերով մեկնում են Երուսաղէմ՝ իսլամական «ժայռի գմբէթ» սրբավայրի շրջակայքի սալիկները նորոգելու համար:

1920 թ.-ին հայ ընտանիքները պատերազմի պատճառով այլևս Կոստանա ետ վերադառնալ չէին կարող: Այսպիսով, Դաւիթ Յովհաննիսեանը Երուսաղէմում պիղ-նես է հիմնում եւ այս երեք ընտանիքները համատեղ աշխատում են:

1948 թ.-ին՝ Արաբա-իսրայէլական պատերազմի օրերին Դաւիթ Յովհաննիսեանը դադարեցնում է իր գործունէութիւնը եւ մեկնում Երուսաղէմ:

Պալեան եւ Կարակաշեան ընտանիքը պատերազմի տարիներին դժուար օրեր են ապրում, անգամ

նակցութեամբ հիմնած գործն իսրայէլում ու Պաղեստինում այժմ գործող խեցեգործութեան ամենահին պիղնէսն է:

Ընկերութեան ներկայիս սեփականատիրոջ պապը՝ Նշան Պալեանն, արուեստը սովորել է Կոստանայում յայտնի յախճապակագործ Դաւիթ Յովհաննիսեանից: Նրա որդին Սեդրակ Պալեանը կատարելագործել է հմտութիւնները Մեծ Բրիտանիայում՝ սովորելով անգլիացի վարպետ Բերնարդ Լինչի մօտ, Սեդրակի կինը՝ Մարի Պալեանը կերպարուեստին ու յախճապակի զարդարելու արուեստին տիրապետել է դեռ Ֆրանսայում ապրելու տարիներին: Նշան Պալեան կրտսերը սովորել է Ամերիկայի Միացեալ Նահանգներում՝ Օհայոյի համալսարանում: Ընտանեկան պիղնէսը նա կառավարում է 1996 թ.-ից:

Պալեանների ընտանիքի աշխատանքները բազմիցս ցուցադրուել են աշխարհի տարբեր յայտնի թանգարաններում, այդ թւում Ուաշինկթընի Սմիթսոնեան թանգարանում, Լոստոնի Վիկտորիայի եւ Ալբերտի թագաւորական թանգարանում, Թեյ Աւիւի էրեց-իսրայէլ պատմական եւ հնագիտական թանգարանում: Նրանց լաւագոյն աշխատանքներն այժմ պահպանուել են Ամերիկայի, Եւրոպայի եւ Մերձավոր արեւելքի երկրների մասնաւոր հաւաքածոներում:




պատերազմական շրջանում շարունակուել են եւս աշխատել: Սակայն ամբողջ աւերուել ու ոչնչացուել է, ամէն ինչ կրկին սկսում են գրոյցից:

Նշան Պալեանի թոռը՝ կրտսեր Նշան Պալեանն իր հարցազրոյցներից մէկում ասում է, որ Պալեան ընտանիքի անցած ճանապարհը դիմանալու դժուարին ուղի էր, ինչպէս հայ ժողովրդի պատմութիւնը:

Սակայն, այս ընտանիքի ժառանգները դժուարութիւններն անցեալում թողնելով արժանապատուութեամբ շարունակում են հայկական յախճապակու արուեստը:

Պալեանների ընտանիքը Երուսաղէմում խեցեգործութեամբ է զբաղուել 1920 թ.-ից: Նրանց մաս-

Մարի Պալեանն իսկական յեղափոխութիւն առաջացրեց յախճապակու արուեստում 1992 թ.-ին Սմիթսոնեան ինստիտուտը վեցամիս շարունակ ցուցադրեց Մարի Պալեանի աշխատանքները՝ «Դրախտի տեսարանները» խորագրով ցուցահանդէսում ներկայացուած էին 20 մեծ վահանակներ, որոնք միասին ներկայացնում էին նկարչի հայեցակարգը վերջնական պարտէզի մասին: Շնորհիւ դրան արձագանքների պատկերասահը երկարացրեց ցուցադրութիւնը: Մարի Պալեանի ստեղծագործութիւնները ներկայացուած են նամականիշի վրայ եւ դրան յաջորդած բազմաթիւ հրատարակու-



## Թիւններում:

«Դրախտի տեսարաններ» ցուցադրութեան աշխատանքները տեղադրուած են Նիդերլանդների Վասենար համայնքի պարտական պարտէզներում: 2012թ.-ին Մարի Պալեանը պարգևատրուել է ՀՀ Սփիւռքի նախարարութեան «Արշիլ Գորկի» շքանշանով:

Պալեանների արհեստին ու

պատերազմի առաջին իսկ օրերից Սեդրակ Պալեանն ու իր երեք սփիւռքահայ ընկերներն առաջնագծում էին: Այժմ էլ Արցախում աջակցութեան ծրագրեր իրականացնելուն զուգընթաց Հայաստանում գտնուող արցախցի մանուկներին է համախմբել եւ մէկդարեայ արուեստի գաղտնիքներին է ծանօթացնում: Տարիներ շարունակ Աշ-



արուեստին հայաստանաբնակ հանրութիւնը մեծապէս հաղորդակից դարձաւ երկու տարի առաջ: 2019 թ.-ի Սեպտեմբերի 28-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հովանու ներքոյ եւ Պալեան նշանավոր ընտանիքը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» Մատենադարանի ցուցասրահում բացեց «Կոստանայից Երուսաղէմ. «Յախճապակու վարպետութեան 100-ամեայ ճամբորդութիւն» խորագրով բացառիկ ցուցահանդէս:

Այն նուիրուած էր Երուսաղէմի Պալեան ընտանիքի աւանդական գործին՝ Երուսաղէմում հայկական յախճապակու հիմնելու 100-ամեակին: Յուցահանդէսը դիտելով ամբողջական պատկերացում էինք կազմում Պալեանների անցած ճանապարհի եւ Երուսաղէմի հայկական յախճապակու աւանդութեան մասին, ինչպէս նաեւ նրանց ընտանեկան ժառանգութիւնը, որ այսօր հաւատարմօրէն պահուել են Պալեանների սերունդները՝ այն հասցնելով մինչեւ Հայաստան:

Երուսաղէմում ու Յորդանանում գործունէութիւն ծաւալող Պալեան ընտանիքը յախճապակու արտադրութիւնն ընդլայնելու մեծ ծրագրեր ունի, որոնցից առանձնաշատուկ ու շաղրութեան են արժանացնում Հայաստանում յախճապակու արհեստն ու արուեստը տարածելը, սակայն համաճարակի ու պատերազմի պատճառով նախաձեռնութիւնը մի փոքր դանդաղեց: Իսկ հայրենասէր եւ հայրենանուրթ Պալեաններն ամէն պարագայում էլ մտահոգ ու սրտացաւ են հայրենիքի համար: 2020թ. Սեպտեմբերի 27-ին սանձազերծուած

տարակ քաղաքում հաստատուած եւ Հայաստանում ֆրանսական համալսարանի ուսանող Սեդրակն ասում է, որ ամէն ինչ կեդրոնացած է մայրաքաղաք Երեւանում, պէտք է մարզերն էլ զարգանան եւ իրենք հենց Աշտարակից են սկսել:

Նշենք, որ 2020 թ. Յունուարին իսրայէլի Պետութիւն աշխատանքային այցի շրջանակում Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեանը Երուսաղէմում այցելել են Ռոքֆելլեր հնագիտական թանգարան եւ դիտել այստեղ բացուած՝ հայկական յախճապակուն նուիրուած ցուցադրութիւնը, որը կազմակերպել է յախճապակու ստեղծմամբ զբաղուող Պալեանների յայտնի ընտանիքի չորրորդ սերնդի ներկայացուցիչ Սեդրակ Պալեանը: Այս հանդիպման ընթացքում էլ Նախագահ Սարգսեանը յայտնում է իր պատրաստակամութիւնն ու աջակցութիւնը Հայաստանում յախճապակու արհեստի ու արուեստի հիմնման ու զարգացման հարցում:

Իսկ Պալեան ընտանիքի չորրորդ սերնդի զաւակներ Սեդրակը, Գեղամն ու Նանորը յստակ գիտակցում են իրենց ուսերին դրուած պատուի արժէքն ու պարտաւորութիւնը: Նրանցից իւրաքանչիւրը ձգտում է զարգացնել ունեցած գիտելիքները, կարողութիւններն ու հմտութիւնները, որպէսզի ձեռք ձեռք բռնած, ուս ուսի տուած նոր լուծումներով ու նոր գաղափարներով շարունակեն հարստացնել ու զարգացնել իրենց պապերի մէկդարեայ մշակութային ժառանգութիւնը եւ փոխանցել յաջորդ սերունդներին:

# Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Գիւտ Արքեպիսկոպոս Նագգաշեանի Պայծառ Յիշատակին (1933-2021)

ԴՈՎՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

### Վախճանման Գոյժը

Երջանկալիշատակ Գիւտ Սրբազան Արքեպիսկոպոսի վախճանման գոյժը խոր ցաւով ստացալ ուղղակի Փարիզի Առաջնորդարանէն եւ ցաւ ի սիրտ սոցն ցաւակցագիրը գրելու հարկադրուեցալ որպէս երկար տարիներու Անթիլիասի Դպրեվանքին դասակիցն ու Կիլիկեան Սուրբ Աթոռի միաբանակիցը:

Յովհաննէս Նագգաշեան Անթիլիաս ժամանած էր ինձմէ տարի մը առաջ, եւ երբ ես Դպրեվանք մուտք գործեցի 1949 թուի Սեպտեմբերին նշանակուեցալ իրմէ դասարան մը բարձր եւ եղանք բոլորս ի մի դասակիցներ մինչեւ մեր ձեռնադրութեան տարիներուն: Իր դասընկերներէն եղան ի միջի այլոց Մամբրէ քահանայ Գուգուեան, Գաբրիէլ Մոլոյեան եւ Նուպար Քիւփէլեան՝ առաջինը երկարամեայ հոգեւոր հովիւր Պոսթոնի համայնքին եւ միւս երկուքը յայտնի մտաւորական ազգայիններ Նիւ Եորքի եւ Գալիֆորնիոյ մէջ: Գիւտ Սրբազան իր դասարանին, Կիլիկիոյ Միաբանութեան միջին սերունդին եւ յատկապէս Մայր Աթոռի միաբանութեան շարքին պատուաբեր բարձրաստիճան հոգեւորականը դարձաւ իւրապատու առաջինութեամբ, ժպտարթուն ծառայասիրութեամբ եւ բարի բնավորութեամբ:

Հալէպի արաբախօս հայ հին սերունդին ազնուական ներկայացուցիչն էր Սրբազանը հաւատարիմ իր ծննդավայրին ու անոր ներշնչած բարիքներուն: Եկեղեցասէր ուսանող մը ըլլալով հանդերձ կը փայլէր նաեւ իր անխարդախ ընկերակցութեամբն ու ժպտով, խօսելու յատուկ ձայնանիշով, բարկանալու նշաններ երբեք ցոյց չտալով, զգացնելով որ ամէնինչ անպայման կը յանգի իր երջանիկ աւարտին: Կը հեռանար վէճերու շրջանակէն, տեսնելով տղոց վէճն ու անհամաձայնութիւնը, առանց խօսք մը ըսելու պարզապէս կը հեռանար նոյն ժպտադէմ Յովհաննէս Նագգաշեան՝ ցոյց տալով իր տոկուն նկարագիրն ու զուարթ գործընթացը:

**Մայր Աթոռի Հոգեւորականը**  
Իր սերունդէն միակն էր որ առանձինն ձեռնադրուեցաւ իր դասարանի շրջանաւարտներէն ձեռամբ Կիլիկեան Աթոռի Տեղապահ Խաղ Արքեպիսկոպոս Աջապահեանի 1955 թուին, մինչ իր անմիջական նախորդները եղանք մենք երեքս՝ ձեռնադրուած տարի մը աւելի կանուխ: Իր ծառայասիրութեամբ ցայտուն Գիւտ վարդապետ Նագգաշեան գրաւած էր իր մեծերուն ու շարժութիւնն ու գնահատանքը որպէս գործակատար, գիտնալով իր ընկերքն ու գործի անցնելով փոխան խօսքի վաճառական մը ըլլալու կամ պահուրտելու պատեհապաշտ պատուարներու ետին: Հայր Գիւտ այդպէս ճանչցուեցաւ իր միաբանակիցներէն դառնալով բոլորին սիրելին:  
Միայն երկուքս մնացեր էինք արտասահմանեան հայ հոգեւորականներէն որ նախնագոյն թուա-



կանին, 1958-ին, հրակէրովը Ամենայն Հայոց Երջանկալիշատակ Տ.Տ. Վազգէն Ա Կաթողիկոսին այցելէր էինք Մայր Աթոռ: Գերագոյն հոգեւոր Խորհուրդը որոշէր էր նոյն տարին յիշատակել Ամենայն Հայոց Կաթողիկոսին ծննդեան յիսնամեակն (1908) ու գահակալութեան երրորդ տարին (1955): Գիւտ վարդապետը կը ներկայացնէր Կիլիկիոյ էջմիածնի հաւատարիմ միաբանութիւնը, իսկ ես յետվազայ համայնքը ուր վեհափառ Հայրապետը նշանակէր էր զիս որպէս հոգեւոր հովիւ: Նոյն առիթով էջմիածնի Մայր Տաճարին մէջ Հայրապետի օրհնութեամբ երկուքս ստացեր էինք վարդապետական չորս աստիճանները եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսէն՝ վարդապետական Լանջախաչ կրելու իրաւունքն ու Սրբատառ Կոնդակը:

**Գիւտ Արքեպիսկոպոս**  
Բարեմասնութիւններով յայտնի եւ ծառայասիրութեամբ փայլուն հոգեւորականը աչքառու պիտի դառնար եւ 1960-ին հրաւիրուէր Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ երջանկալիշատակ Սերովբէ Արքեպիսկոպոս Մանուկեանէն որպէս հոգեւոր տեսուչ Փարիզի Ս Յովհաննէս Մկրտիչ Մայր Եկեղեցոյ, տալով նաեւ անոր Ծայրագոյն վարդապետի աստիճանները: Տասնամեայ ծառայութեան աւարտին Սերովբէ Սրբազանի խնդրանքով 1973 թուին Ամենայն Հայոց Կաթողիկոսը եպիսկոպոս կը ձեռնադրէր Գիւտ Մ. վարդապետ Նագգաշեանը՝ երեք այլ ընծայեալներու Արսէն Պէրպէրեան, Գէորգ Սերայտարեան եւ Նարեկ Շաքարեան եպիսկոպոսներու հետ միասին: Այդ թուականէն սկսեալ որպէս Պատուիրակի Փոխանորդ Գիւտ Եպիսկոպոսին առջեւ կը բացուէր վարչական պատասխանատու պաշտօններ վարելու պատեհութիւնը, արդարացնելով Ֆրանսայի եւ ընդհանրապէս

Արեւմտեան Եւրոպայի հայ համայնքներուն հոգածութիւնը:

### Հայրապետական Պատուիրակ եւ Առաջնորդ

Սերովբէ Արքեպիսկոպոս Մանուկեան յանակնկալ կը վախճանէր 1984 փետրուարին, եւ Վազգէն վեհափառ Հայրապետ Գիւտ Եպիսկոպոսը կը նշանակէր Հայրապետական Պատուիրակ եւ շուտով թեմական իշխանութիւնները զինք կ'ընտրէին Առաջնորդ Փարիզի, զոյգ պաշտօնները վարելով 25 տարիներ: Հեռուէն հետե-

ւելով Արեւմտեան Եւրոպայի եւ Ֆրանսայի համայնքներու յարատեւ գործունէութեան, երբեմն դժուարութիւններ կը յարուցուէին որոնք արգելք կ'ըլլային թեմակալ եպիսկոպոսին բարուք գործունէութեան, յատկապէս հարաւային Ֆրանսայի համայնքներէն ներս:

Գիւտ Սրբազան իր թեմէն ներս տասնեակ մը քահանաներ ձեռնադրեց որոնցմէ մի քանին փոխադրուեցան Ամերիկա եւ Գանատա: Իր կարեւոր վաստակներէն պէտք է չիշել Ամադերտամի Սուրբ Հոգի հինաւուրց հայ եկեղեցին որ երկար տարիներ սեփականութիւնը դարձած էր քրիստոնեայ այլ կրօնաւորութիւններուն որոնք ծախու առած էին կալուածը: Գիւտ Արքեպիսկոպոսի ջանքերով եւ բարերարներու օժանդակութեամբ համաձայնութիւն կը գոյանար չիշեալ կրօնաւորութիւններուն միջեւ ու վերստին նոյն եկեղեցին կը գնէին որուն օժումն ալ ինք կը կատարէր: Իր նախորդը Սերովբէ Արքեպիսկոպոս ջանացած էր վերատիրանալ եկեղեցիին եւ սակայն չէր յաջողած:

Հոգելոյս Սրբազանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին տեսնելու առիթը ունեցալ երբ տակաւին աշխոյժ էր եւ առողջ: Միայն վերջին տարիներուն այցելուներէ կ'իմանայի առողջութեան վատթարացումը եւ առիթով մըն ալ կը խօսակցէինք հեռաձայնով երբ Միացեալ Նահանգներ այցի ելած էր: Մեզի կը մնայ աղօթել իր հոգոյ հանգստեան համար որ Փրկիչն մեր Քրիստոս որուն ճշմարտապէս հաւատարիմ ծառան եղաւ բանիւ եւ գործով իր երանական տեսութեանն արժանի արասցէ ի լոյս երեսաց իւրոց:

St. Gregory Armenian Church, Pasadena

*Abp. Hovnan Derderian*  
Primate of the Western Diocese  
Will Preside Over

*The Historic Groundbreaking Ceremonies of the*  
**MUSHEGAIN PAVILION**




*And the Unveiling of the plans for the*  
**HEROES OF ARTSAKH PRAYER GARDEN**  
*Luncheon and Special Program*  
*Honoring the Mushegain Family*  
*Sunday, May 16, 2021 Immediately Following Services*

**ՄՈՒՇԵՂԵԱՆ ՏԱՂԱԽԱՐԻ ՀԻՄՆԱՐԿԷՔ**  
**Եւ Արցախի Հերոսներուն Աղօթքի Պարտէզի**  
**Ծրագրին Ներկայացում**

*Կիրակի, Մայիս 16, 2021 Սուրբ Պատարագէն Անմիջապէս ետք*

**For Reservations Please call 626-4491523**  
**DONATION \$25 - STUDENTS \$20**

### Հայկական ճեմարանը Ծառատունկով Կը Տօնէ Իր Անդրանիկ Տարեվերջը



Փաստենա քաղաքի Պլեյն վարժարանի (Blair High School) մէջ այս տարի գործել սկսած Հայկական ճեմարանը ծառատունկով մը կը տօնէ իր ուսումնական անդրանիկ տարուան աւարտը: Վարժարանը որոշած է ATP (Armenia Tree Project) կազմակերպութեան համագործակցութեամբ՝ իւրաքանչիւր 50 աշակերտի անունով ծառ մը տնկել Հայաստանի Աշտարակ քաղաքի մէջ: Այդ ծառերը մաս պիտի կազմեն նոյն կազմակերպութեան կողմէ հիմնուած սփիւռքահայ վարժարաններու յատուկ անտառին:

Այն հայցումին, թէ ճեմարանը ինչո՞ւ որոշած է Հայաստանի մէջ ծառատունկ կատարել՝ նորաստեղծ վարժարանի վարիչ Նորայր Տատուրեանը այսպէս արտայայտուեցաւ. «Այդ յիսուն ծառերը խորհրդանշական են: Ծառը կը ներշնչէ բարձր գաղափարներ, ինչպէս՝ յանձնարարութիւն, հողի եւ մարդու կապը, համեստօրէն ծառայել, պտղատու ըլլալ... Այս ծրագրի շնորհիւ մեր աշակերտները արմատ կը դնեն հայրենի հողի մէջ: Մեր նպատակն է սփիւռք-Հայաստան կապը ամուր եւ մնայուն պահել ու այդ ուղղութեամբ դաստիարակել հայրենանուէր սերունդներ»:

Աշակերտները ծառատունկի

որպէս յիշատակ կը ստանան ATP-ի կողմէ պատրաստուած գեղատիպ շնորհակալագիր եւ շապիկ մը:

Վարժարանի Հայաստան-Փաստենա կապերու մէկ այլ դրսեւորումն էր Երեւանի Գաֆէսճեան Արուեստի Կեդրոնի հետ սկսած ուսումնական կապը: Աշակերտները հեռակալ դրութեամբ հետեւեցան կեդրոնի կողմէ պատրաստուած բազմաթիւ կրթական ծրագիրներուն, ինչպէս՝ «Հայկական պետական նշաններ», «Դիմակը պատմութեան մէջ», «Հայկական թուղթեր», եւն.: Դասընթացքները ներկայացուց կեդրոնի կրթութեան գիծով տնօրէն Լիզա Շիրինեանը:

Հայկական ճեմարանը կը գործէ Փաստենայի Միացեալ Կրթական Տարածաշրջանի (PUSD) երգիքի եւ հովանաւորութեան տակ: Որպէս պետական վարժարան (6-12 ըր դասարաններ) ան անվճար հայեցի դաստիարակութիւն կը մատուցէ թէ՛ Փաստենայի եւ թէ՛ յարակից քաղաքներու հայորդիներուն: ճեմարանը ունի վարկաւորուած (accredited) լիակատար հայկական ծրագիր եւ ունի հայրենի բոլոր մակարդակներու համար դասարաններ: Արձանագրուելու կամ այլ տեղեկութիւններ ստանալու համար հեռ.աձայնել՝ Թայլին Նազարեան (626) 396 5820 (ext. 80124):

### Փաստենայի Շաբաթօրեայ Վարժարանը Յիշատակեց 24 Ապրիլը



Փաստենա քաղաքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ շաբաթօրեայ վարժարանը 1 Մայիս 2021, Շաբաթ օր յատուկ յայտագիրով մը յիշատակեց Հայոց Յեղասպանութեան գոհերը: Նոյն օր նաեւ աղօթքի պահ նշանակուեցաւ հաւաքմագրիներու համար:

Յայտագրի սկզբին աշակերտները Միծեռնակաբերդի ճարտարապետութեան նուիրուած կարճատեւ շարժանկարներ դիտեցին ու լսեցին «Մի Ուրանար» երգը, որ Հայաստանի 2015ի երգն էր Եւրոտեսիլ միջազգային մրցոյթի մէջ: Ապա աշակերտները եկեղեցուց բախի մէջ տեղադր-

անունդ ստանան»:  
Վարժարանի տնօրէն Նորայր Տատուրեանը իր խօսքին մէջ յիշեց, թէ «Դպրոց - հայրենիք - պատմութիւն» կապը ամրացնելու ու յաւերժացնելու համար իւրաքանչիւր աշակերտի անունով որոշած են Հայաստանի մէջ ծառ մը տնկել, որպէսզի վարժարանի բոլոր սաները խորհրդանշական արմատներ ունենան հայրենի հողի մէջ: Այդ ծառերը պատճառ պիտի ըլլան, որ պատանիները աւելի լաւ ճանչնան իրենց պատմութիւնը ու աւելի ամուր արմատներով կապուին մայրենի հողին: Ծառերը կը տնկուին Աշ-



ուած խաչքարի վրայ ծաղիկներ խոնարհեցուցին: Այդ պահէն առաջ յուզիչ եւ իմաստալից դարձաւ, երբ վարժարանի ծնողներէն սարկաւազ Արա Տաքսեանը սկսաւ ցեղասպանութեան գոհերուն նուիրուած «Հրաշացան պակուցմամբ» նահատակներու շարական օրհնութիւնը երգել:

Ապա եկեղեցուց հովիւ Հ. Սարգիս Ա. Քհնյ. Փէթոյեանը մանուկներու հասկնալի լեզուով եւ անմիջականութեամբ բացատրեց, թէ հայկական ինքնութեան կորուստն ալ ցեղասպանութեան շարունակութիւնն է: Տէր հօր առաջնորդութեամբ ներկաները միաբերան երգեցին Տէրունական աղօթքը: Ապա Հայր Փէթոյեանը շնորհակարտեց վարժարանի աշակերտներն ու ծնողները, որովհետեւ անոնք «...Հայեցի դաստիարակութիւնը կարեւորած՝ ամէն շաբաթ օր դպրոց կու գան, ոմանք շատ հեռու տեղերէն, որպէսզի երեխաները ազգային եւ հայրենի

տարակ քաղաքի մօտ՝ սփիւռքահայ վարժարաններու նորաստեղծ պուրակի մէջ:


Յայտագրի վերջաւորութեան վարժարանի երգի ուսուցչուհի, մենակատար Մարալ Քիւրտեանը երգեց «Թուչէի մտքով տուն» երգը («Մարտիկի երգը»), որպէսզի Արցախեան երկրորդ պատերազմի աւարտէն ի վեր թշնամիի բանտերու մէջ գերի պահուող հայ զինուորները շատով, առողջ ու ապահով տուն վերադառնան:

Փաստենա քաղաքի շաբաթօրեայ վարժարանը վեց տասնամեակ է, որ հայորդիներուն կը մատուցէ հայեցի դաստիարակութիւն, ներառեալ՝ լեզու, մանկական գրականութիւն, պատմութիւն եւ երգ: Արձանագրութեան կամ յաւերժացնել տեղեկութիւններու համար գրել stgregorysaturdayschool@gmail.com հասցէին, կամ՝ հեռ.աձայնել եկեղեցուց գրասենեակը - (626) 449-1523:

**Ստացուած Գիրքեր**

Շ Ո Ր Ի Կ Ա Կ Լ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ ստացանք Վահէ Պէրպերեանի ֆրանսերէն լեզուով գրուած Au Mom Du Pere et du fils խորագրով հրատարակուած 158 էջերէ բաղկացած շահեկան գիրքը:

Գիրքը կը պարունակէ սփիւռքահայ գաղթաշխարհի հայ մտաւորականներու եւ ակամատեսի վկայութիւնները:



**ԳՈՐԾԱԿՈՐ Կ՛ՈՒԶՈՒԻ**

Փաստիճայի անուշավաճառ Սարգիսը կարիքը ունի աշխատող օրիորդներու կամ տիկիներու խոհանոցի մէջ եւ դուրսը առեւտուրի առ ու ծախի համար

Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել Պրն. Վազգէնին (818) 966-5834  
1776 E. Washington Blvd. Pasadena, CA:

# Լաս Վեկասի Բժշկական Ուսումնարանը Պիտի Կոչուի Առասպելական Նուիրատու Գրրգ Գրրիգորեանի Անունով



Նեվադայի Լաս Վեկաս համալսարանի բժշկական Ուսումնարանը այսուհետև պիտի կրէ առասպելական նուիրատու եւ ծանօթ գործատէր Գրրգ Գրրիգորեանի անունը: Արդարեւ այս առաջին անգամն է որ մեծ բարերարի անունով պիտի կոչուի այդ շէնքը Kerk Kerkorian School of Medicine at UNLV:

«Գրրգորեանի անունը ոչ մէկ այլ շէնքի վրայ պիտի չի շատակուի» յարեց Նեվադայի Առողջապահութեան եւ կենսաբանութեան ոչ հաստիքաբեր ինստիտուտի մարմնի անդամ Վինտի Շուստեր, որ միաժամանակ վերահսկիչն է շինարարութեան ծրագրին:

Արդարեւ 2015ին իր մահկանացուն կնքած Գրրգորեան, իր կեանքի ընթացքին, շատ մը առիթներով, մերժած է իր անունը դնել կառուցողորդ որեւէ շէնքի: Իր հերթին, Նեվադայի Առողջապահութեան եւ կենսաբանութեան ընկերակցութիւնը իր յայտարարութեան մէջ, նշած է որ Գրրգորեանի անշարժ կալուածքի ինստիտուտը

թիւնը նկատի առնելով բժշկական ուսումնարանի համար եղած մեծագումար յատկացումն ու Գրրգորեանի վայելած հոգակց համայնքին մէջ եւ որպէս անուանի բարերար, եզրայանգուած են այս որոշումին:

Այս առթիւ նշենք որ 135,000 քառ. ոտք «12,541 քառ. մէթր» շինարարութիւնը արդէն սկսած է անցեալ Հոկտեմբերին եւ պիտի աւարտի յառաջիկայ տարի: Իսկ նախատեսուած ծախսը 150 միլիոն տոլար է: Այս առթիւ ինք անպաշտօն կրպով յորջորջուած է «Լաս Վեկասի հիւրանոցներու Հայրը»: Յիշենք միայն երեք մծ պանդոկները MGM, Bally's եւ MGM Grand, որոնք կառուցուած են իր նախաձեռնութեամբ:

Մեծանուն բարերարը իր կեանքի ընթացքին բազմաթիւ բարերարութիւններ կատարած է: 1988ին Հայաստանի երկրաշարժին առթիւ 1 միլիոն տոլար յատկացուցած էր վերաշինութեան ծրագիրներուն:

The Armenian Observer

## Կալկաթայի Յայոց Մարդասիրական Գեմարանի 200-Ամեակը



Կալկաթայի Հնդկաստան Հայոց մարդասիրական Գեմարանի հիմնադրութեան պանծալի 200-ամեակը նշուեցաւ Երեւանի Արուեստի Միութեան երդիքին տակ:

Չուգահեռ հանդիսութիւն մը կազմակերպուած էր նաեւ Հնդկաստանի մէջ: Կալկաթայի Գեմարանէն ներս ներկայ էին ուսուցիչներ, տեսչութիւնը, Հնդկահայոց վարչութիւնը, ինչպէս նաեւ համայնքէն անդամներ:

Կ'իմանանք թէ յառաջիկային Կալկաթայի Հայոց Մարդասիրական Գեմարանին մէջ պիտի բացուի

Թանգարան մը, հովանաւորութեամբ Հայաստանէն բարերար եւ գործարար Արա Յակոբեանի, որուն գաւակները կ'ուսանին այնտեղ: Այս առթիւ Հայաստանի կեդրոնական դրամատունը թողարկած է արծաթեայ յուշադրամ մը:

Նշենք նաեւ որ Կալկաթայի Հայոց Մարդասիրական Գեմարանը հիմնադրուած է 1821 թուականին: Մինչեւ 1870 ճեմարանն ունեցած է իր ինքնուրոյն կրթական ծրագիրը: Յետագային ան համապատասխանեցուած է Կալկաթայի համալսարանի քննութիւններու պահանջներուն:

## ՄԱՐԱԶԴ



ՍՕՆԱ ՊԱՊԻԿԵԱՆ-ԷԼՔԱՏՈՒՄ 1951-2021

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր տիկնոջ, մօր, քրոջ եւ հարազատին՝ ՍՕՆԱ ՊԱՊԻԿԵԱՆ-ԷԼՔԱՏՈՒՄԻ մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, Ապրիլ 16ին, 2021, յետ երկարատեւ հիւանդութեան:

Թաղման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, Մայիս 6, 2021, առաւօտեան ժամը 10:00ին Live Oak Memorial Park-ի մատրան մէջ, 200 East Duarte Road, Monrovia, CA:

Սգակիրներ՝ Ամուսինը՝ Էմիլ Էլքատուժ Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Ռաքի եւ Ռիթա Էլքատուժ Մայրը՝ Մելինէ Պապիկեան Քոյրը՝ Վերապատուելի եւ Տիկ. Տիգրան եւ Սիօն Շանլեան եւ զաւակները Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Սէմ եւ Մայտա Պապիկեան եւ զաւակները Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Արի եւ Սիլվիա Պապիկեան եւ համայն Էլքատուժ, Պապիկեան, Շուշանեան, Գրիգորեան, Քրիսթօ, Գալուստեան, Աջապահեան եւ Գալայնեան ընտանիքներ եւ հարազատներ:

## ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՐԱ ՊՈՅԱՃԵԱՆԻ մահուան առթիւ տիար Սահակ Գթըֆեան իր խորագրաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ մասնաւորաբար եղբօր՝ տիար Սեպուհ Պոյաճեանին: Առ այդ \$200 կը նուիրէ «Մասիս»ին:

## Մինսկի Խմբի Ձեւաչափի Ակտիւացումը

Շարունակուած էջ 2-էն

Նաեւ ՌԴ ԱԳԻ Խօսնակ Մարիա Զախարովան՝ աուղիսի ժամանակ պատասխանելով հայ լրագրողի հարցին: Թուրքիան եւ Ատրպէյճանը, որքան էլ չուզեն, միեւնոյն է, ստիպուած են համակերպուել այն իրողութեան հետ, որ Արցախի Հանրապետութեան ժողովրդի դէմ սանձազերծած ագրեսիայով ինդիքը չեն կարողացել լուծել: Աւելին՝ այն հակաչական քայլերով հեռացրել են վերջնական կարգաւորման փուլից: Նրանք ստիպուած են ընդունել, որ առանց քաղաքական բանակցութիւնների եւ Արցախի Հանրապետութեան կարգավիճակի որոշման՝ հնարաւոր չէ հարցը փակել, եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի

ձեւաչափի ակտիւացումն այլընտրանք չունի: Այն գործող եւ արդիւնաւետ աշխատող հարթակ է: Արդիւնքներ չեն տալու նաեւ թուրքական կողմի ձգտումները Մինսկի խմբի համանախագահների թուի աւելացման ուղղութեամբ, քանի որ դրա շուրջ փոխհամաձայնութիւն չի լինի ոչ միայն հակամարտող կողմերի միջեւ, այլեւ տարածաշրջանում խաղաղոյնների շրջանում: Հետեւաբար, համանախագահների թուի փոփոխութեան ուղղութեամբ քայլերը ժամանակի ի գուր վատնում են, իսկ Մինսկի խմբի շրջանակներում կարգաւորման գործընթացի վերսկսումն անխուսափելի է:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

## Մոսկուայի Դաշնագրին (1921) Ոգին

Շարունակուած էջ 11-էն

եւ, որ Թուրքիա եւ Ռուսիա նախածրագրուած ձեւով վերջ տուին Մինսկի խումբի դարաբաղեան նախաձեռնութեան:

Բացայայտ կը դառնայ, որ Ռուսիա եւ Թուրքիա, Մոսկուայի դաշնագրին ոգիով, աւելի նախարարուն: 188ին դասուած է Կալկաթայի քոլէճներու շարքը: 1999ին Կալկաթայի գերագոյն ատեանի որոշումով, ճեմարանը յանձնուած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ինստիտուտին: Նոյն դատավճիռով Ամենայն Հայոց Կաթողիկոսին վերապահուած է ճեմարանը

պատուութիւն կու տան իրենց աշխարհաքաղաքական շահերուն, քան միջազգայնօրէն ճանչուած սկզբունքներուն, ինչպէս՝ ազգերուն քննորոշման իրաւունքին, մարդկային իրաւունքներուն, քաղաքական բազմակարծութեան եւ խաղաղ միջոցներով տագնապներու լուծման ընտրանքին:

րանը տնօրինելու իրաւունքը: Ներկայիս այս հաստատութեան ներս կ'ուսանին աշակերտներ Հայաստանէն, Հնդկաստանէն, Իրանէն, Իրաքէն, Սուրիայէն եւ այլ երկիրներէն: Մաներուն եւ ուսուցիչներուն կեցութեան, գրեական պիտոյքներուն եւ ամսականներուն ծախսերը ամբողջովին կը հոգայ ճեմարանը:

### «Այաքս» Ամստրդտամ 35 Անգամ Ըլլալով Հոլանտայի Ախոյեան



Ամստրդտամի «Այաքսը» ժամանակէն շուտ ապահովեց ֆուլթպոլի Հոլանտայի Ախոյեանի տիտղոսը:

Հոլանտայի առաջնութեան 31-րդ հանգրուանին ամստերտամցիները 4:0 հաշուով սեփական դաշտի վրայ յաղթանակ տարին «Էմենի» նկատմամբ: Առաջնութեան աւարտէն 3 շրջան առաջ էրիկ Տեն Հագի գլխաւորած խումբը հաւաքած է 79 միաւոր եւ անհասանելի դարձած երկրորդ տեղը գտնուող «ՊՍՎ Էյնդհովենի» համար:

«Այաքս» պատմութեան մէջ 35-րդ անգամ դարձաւ Հոլանտայի ախոյեան: «ՊՍՎ Էյնդհովենը» 24 անգամ նուաճած է տիտղոսը:

### «Զենիթը» Ռուսաստանի Ախոյեան

Ֆուլթպոլի Ռուսաստանի առաջնութեան 28-րդ հանգրուանին Սանկտ Պետերբուրգի «Զենիթը» սեփական դաշտին վրայ 6:1 արդիւնքով պարտութեան մատնեց Մոսկուայի «Լոքոմոտիւին» եւ ժամանակէն շուտ նուաճեց ախոյեանի տիտղոսը:

Ախոյեանութեան աւարտէն 2 հանգրուան առաջ Սերգեյ Սեմակի գլխաւորած խումբը հաւաքեց 61 միաւոր եւ 9 միաւոր առաջ անցաւ երկրորդ տեղը գտնուող «Լոքոմոտիւին»:

«Զենիթը» 7-րդ անգամ դարձաւ Ռուսաստանի ախոյեան (2007, 2010, 2011/12, 2014/15, 2018/19, 2019/20, 2020/21): Սերգեյ Սեմակն առաջին մարզիչն է, որ «Զենիթին» 3 անգամ հասցուց ախոյեանութեան:

### «Լիւերփուլի» Ու «Մանչեսթըր Եունայթըտի» Խաղը Յետաձգուեցաւ Երկրպագունրուն Պատճառով



«Լիւերփուլի» ու «Մանչեսթըր Եունայթըտի» միջեւ ֆուլթպոլի Անգլիոյ առաջնութեան 34-րդ հանգրուանի հանդիպումը Մայիսի 2-ին տեղի չունենցաւ անվտանգութեան նկատառումներով: :

Հանդիպումը առաջ «Մանչեսթըր Եունայթըտի» համակիրները ներխուժելով դաշտ կը պահանջէին ակումբի Ամերիկացի սեփականատիրոջ հրաժարականը: Անոնք դժգոհ էին վերջերս յայտարարուած եւ անմիջապէս մերժուած Եւրոպական Միւփըր Լիգայի ստեղծման առթիւ:

### «Պարսելունան» Յաղթեց Մեսիի Երկու Կոլերուն Շնորհիւ

Ֆուլթպոլի Սպանիոյ առաջնութեան 34-րդ հանգրուանին գաթալոնական «Պարսելունան» 3:2 արդիւնքով յաղթանակ արձանագրեց «Վալենսիայի» նկատմամբ:

Հանդիպման բոլոր կողերը նշանակուեցան երկրորդ խաղակէսին: Երկու կողերու հեղինակ դարձաւ «Պարսելունայի» արժենթինացի յարձակող Լիոնել Մեսին, մէկ անգամ ալ յաջողութեան հասաւ ֆրանսացի Անտուան Կրիզմանը:

33-ամեայ Մեսին 28 կոլով կը գլխաւորէ ումբարկուներու ցուցակը: Այժմ «Պարսելունան» ունի 74 միաւոր եւ Մատրիտի «Ռեալի» հետ կը բաժանէ 2-3-րդ տեղերը: Առաջատար Մատրիտի «Աթլէթիքոն» հաւաքած է 76 միաւոր, իսկ «Վալենսիան» 36 միաւորով 14-րդն է:

### «Ինթեր» Ժամանակէն Շուտ Դարձաւ Իտալիոյ Ախոյեան

Միլանի «Ինթերը» ժամանակէն շուտ նուաճեց ֆուլթպոլի Իտալիոյ ախոյեանի տիտղոսը: Այդ յայտնի դարձաւ առաջնութեան 34-րդ հանգրուանին տեղի ունեցած «Սասուոլո» - «Աթալանթա» խաղէն յետոյ: Հանդիպումը աւարտեցաւ 1:1 արդիւնքով եւ «Աթալանթան» կորսնցուց առաջատար «Ինթերին» հասնելու առիթները:

Անտոնիո Գոնթէի գլխաւորած խումբը ունի 82 միաւոր եւ առաջնութեան աւարտէն 4 շրջան առաջ 13-ական կէտով առաջ է 2-3-րդ տեղերը բաժանող «Միլանէն» ու «Աթալանթայէն»:

Յիշեցնենք, որ 2011/2012թթ. մրցաշրջանէն յետոյ Թուրինի «Եուվենթոսը» առաջին անգամ չկրցաւ նուաճել Իտալիոյ ախոյեանի տիտղոսը:

«Ինթեր» պատմութեան մէջ 19-րդ անգամ կը դառնայ Իտալիոյ ախոյեան: Նախորդ անգամ միլանեան ակումբը Իտալիոյ առաջնութեան յաղթած էր 2009/2010 մրցաշրջանին:



### «Ռոմայի» Անյաջողութիւնները Կը Շարունակուին

Ֆուլթպոլի Իտալիոյ առաջնութեան 34-րդ հանգրուանին Հոմի «Ռոման» հիւրընկալուելով 0:2 հաշուով պարտուեցաւ «Սամպտորիային» եւ գրկուեցաւ մրցաշրջանը լաւագոյն քառեակին մէջ աւարտելու հնարաւորութենէն: Հայաստանի ազգային հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը Պատու Ֆոնսեկայի գլխաւորած խումբի մեկնարկային կազմին մէջ եւ հանդէս եկաւ առանց փոխարինման:

«Ռոման» բոլոր մրցաշարերու ընթացքին չյաղթեց յաջորդական 6-րդ խաղը ըլլալով՝ կրելով չորրորդ պարտութիւնը: Մայրաքաղաքային խումբը 55 միաւորով 7-րդ տեղը կը գրաւէ, իսկ «Սամպտորիան» 45 կէտով 9-րդն է:

### Հայաստանի Գաւաթին «Արարատը» Դուրս Ձգեց «Արարատ-Արմենիային» Եւ Հասաւ Եզրափակիչ

Ֆուլթպոլի Հայաստանի գաւաթի խաղարկութեան յաղթողի կոչումը կը վիճարկեն Երեւանի «Արարատը» եւ «Ալշակերտը»:

Երկրորդ կիսաեզրափակիչի պատասխան խաղին Հայաստանի ախոյեան «Արարատ-Արմենիան» 2:1 հաշուով տնային յաղթանակ տարաւ Երեւանի «Արարատի» նկատմամբ, սակայն այդ բաւականաչափ չէր եզրափակիչ դուրս գալու համար: Առաջին խաղին «Արարատը» յաղթած էր 2:0 արդիւնքով:

Աւանի Ֆուտպոլի ակադեմիայի մէջ տեղի ունեցած պատասխան խաղին «Արարատ-Արմենիայէն» աչքի ինկան ֆրանսացի կիսապաշտպան Եոան Գուֆրանը եւ Դաւիթ Տէրտէրեանը, իսկ հիւրերէն՝ սերպ յարձակող Ուրոշ Նենդովիչը:

13 տարի ետք «Արարատ» դարձեալ կը խաղայ Հայաստանի գաւաթի եզրափակիչին:

Յիշեցնենք, որ միւս կիսաեզրափակիչին «Ալշակերտը» 2 խաղերու (1:1, 3:1) արդիւնքի ընթացքին ուժեղ գտնուած էր Հայաստանի գործող գաւաթակիր Երեւանի «Նոայէն»:

Հայաստանի գաւաթի եզրափակիչը տեղի կ'ունենայ Մայիսի 15-ին Վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» մարզադաշտին մէջ:

ԿԻՍԱԵՅՐԱՓՈՒԿԻՉ

ARARAT 2-1 2-3 ARARAT

Գոլեր, 24՝ Տերտերյան, 78՝

Նենդովիչ 71՝

### «Մանչեսթեր Սիթին» Խնդիրներ Չունեցաւ

Ֆուլթպոլի Անգլիոյ առաջնութեան 34-րդ հանգրուանին առաջատար «Մանչեսթեր Սիթին» հիւրընկալուելով 2:0 հաշուով յաղթեց Լոնտոնի «Քրիսթալ Փելասին»: Հիւրերը երկրորդ խաղակէսին 2 վայրկեանի ընթացքին աչքի ընկան արժենթինացի ումբարկու Սերխիո Ագուերոն եւ սպանացի յարձակող Ֆերան Տորեսը:

Խոսեակ Կուալտրոլայի գլխաւորած խումբը 34 խաղէն յետոյ ունի 80 կէտ եւ 13 միաւոր առաջ է երկրորդ տեղը ընթացող «Մանչեսթեր Եունայթըտէն» (33 հանդիւում): «Քրիսթալ Փելասը» (33 խաղ) 38 միաւոր 13-րդն է: